

ԱՐՏԱՔԻՆ ԷՔՍՊԱՆՍԻԱ

«... Քառս սփռելով, մենք, աննկատ, իրենց իրական արժեքները կփոխենք կեղծերով եւ կստիպենք նրանց հավատալ այդ կեղծ արժեքներին: Գրականությունից եւ արվեստից մենք աստիճանաբար դուրս կմղենք նրա հասարակական էությունը. դուրս կմղենք նկարիչների միջից ժողովրդի հոգու խորքում կատարվող գործընթացների պատկերման եւ ուսումնասիրության ցանկությունը, իսկ գրականությունը, թատրոնը, կինոն պետք է պատկերեն եւ փառաբանեն միայն ամենագազրելի մարդկային զգացումները: Մենք պետք է օգնենք եւ բարձրացնենք այնպիսիներին, որոնք կսկսեն սերմանել, սրսկել մարդկային գիտակցությունում սեքսի, բռնության, սադիզմի, դավաճանության, այլ խոսքերով՝ ցանկացած անբարոյականության պաշտամունք:

Պետության ղեկավարությունում մենք քառս եւ անկարգություն կստեղծենք: Մենք աննկատ, բայց ակտիվ եւ մշտապես, կօժանդակենք չինովնիկների հիմարությունը, կաշառակերությունը, անսկզբունքայնությունը: Ազնվությունը եւ օրինավորությունը կծաղրվեն, կդառնան անցյալի մնացուկ ու ոչ մեկին այլեւս պետք չեն լինի: Ստահակությունն ու հանդգնությունը, սուտն ու կեղծիքը, հարբեցողությունն ու թմրամոլությունը, միմյանց հանդեպ անասնական վախն ու անամոթությունը, դավաճանությունն ու ժողովուրդների թշնամությունը մենք ճարպկորեն եւ աննկատորեն կսերմանենք:

Եվ միայն քչերը, շատ քչերը կենթադրեն կամ կհասկանան, թե ինչ է կատարվում: Բայց նման մարդկանց մենք կդնենք անօգնական վիճակի մեջ, կդարձնենք խեղկատակ: Կգտնենք միջոցներ՝ նրանց զրպարտելու եւ հասարակության տականք հայտարարելու»:

(հատված ԿՅՎ ապագա տնօրեն Ալեն Դալեսի ելույթից՝
արտասանված 1945թ. ԱՄՆ Կոնգրեսում)

Ցնցվիր, հայ մարդ. տե՛ս, որ թե՛ անցյալում, թե՛ մեր օրերում թշնամին գործում է նույն ձևերով եւ մեթոդներով՝ դաժան ու նենգ: Այս ամենը անարգել ներարկվում է մեր ազգային օրգանիզմ՝ խախտելով նրա դիմադրողական-ինքնապաշտպանական համակարգը:

Իսկ մենք հավատում ենք սերմանվող կեղծ արժեքներին, որովհետեւ ուրանում ենք սեփականը: Մեր մշակույթը դառնում է դիմազուրկ, որովհետեւ բռնել ենք կապկելու ուղին: Ազգային-բարոյական արժեքները հասարակական կյանքից դուրս են մղվում՝ տեղը զիջելով մեզ համար օտար, անբարո եւ կեղծ արժեքներին:

Ցնցվիր, հայ մարդ: Ցո՛ւյց տուր հակահարվածելու, բռնացողին զարկելու, ինքնապաշտպանվելու քո բնական առաքինությունը: Եվ այդժամ թշնամին կընկրկի ու մեզ հետ հաշվի կնստի, հավատա՛:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ Փագիկ Տեր-Չարությունյան

Տեղեկատվական գործունը վերջին տասնամյակներում որոշիչ դերակատարում է ձեռք բերել անհատի, հանրության, պետության ու ազգի գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Արագ փոփոխվող աշխարհում տեղեկատվության տիրապետումն է, որ հնարավոր է դարձնում հետեւել, համապատասխան լինել եւ արձագանքել նոր իրողություններին: Այսօր տեղեկատվական գործողություններն առավելապես փոխադրվել են քաղաքական հարթություն եւ հանդիսանում են աշխարհաքաղաքականության կարեւորագույն գործիքներից մեկը:

Հայության տեղեկատվական անվտանգությունը

Ժամանակակից աշխարհում ազգերի մրցունակությունն էապես պայմանավորված է տեղեկատվական անվտանգության (ՏԱ) վերաբերյալ նրանց ունեցած հայեցակարգային մոտեցումներով: Ակնհայտ է, որ հայկական ՏԱ համակարգը պետք է ներառի ոչ միայն Հայաստանի (այս հասկացությունը ենթադրում է ՀՀ-ն, ԼՂՀ-ն եւ Ջավախքը) բնակչության, այլեւ Համաշխարհային Հայության հետ կապված տեղեկատվական խնդիրների համախումբը: ՀՀ-ում ընդունված «Ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում, ի դեպ, ամրագրված են մեր ազգային անվտանգության երկու սուբյեկտները՝ Հայաստանը եւ Հայությունը, որոնց ապահովական գործառույթները շաղկապված են ու պետք է հենվեն փոխլրացման սկզբունքի վրա:

Նկատենք, որ Հայաստանի ՏԱ ոլորտը այս կամ այն չափով վերահսկելի է, եւ եթե ընդունվեն փորձագիտական գնահատականների վրա հիմնված գործադիր ու օրենսդրական որոշումներ, ապա կարելի է նախագծել Հայաստանի տեղեկատվական ոլորտի բարեփոխումների մեխանիզմը: Մինչդեռ, Համաշխարհային Հայության պարագայում տեղեկատվական հիմնախնդիրների կարգավորումն անհամեմատ ավելի բարդ է. այլ երկրների հետ կապված՝ դժվար է խոսել գործադիր եւ օրենսդրական որոշումների մասին, չնայած այստեղ էլ իրադրությունը փոքր-ինչ փոխվել է, եւ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ

եվրոպական կոնվենցիաներն ու այլ բնույթի լոբբիստական գործողություններն ընդլայնում են հայության հնարավորություններն այս բնագավառում:

Հայության առանձնահատկությունները SU համատեքստում

Հայության կազմակերպման բարդությունների հիմնական պատճառները մասամբ հայտնի են, սակայն ավելորդ չէ համակարգել դրանցից մի քանիսը SU համատեքստում:

1. Արտերկրի հայության թվաքանակը շուրջ 2 անգամ ավելին է, քան Հայաստանում բնակվող հայերինը, այսինքն՝ ընդհանուր հայության տեղեկատվական ապահովության խնդիրն ավելի մեծածավալ խնդիր է, քան Հայաստանինը:

2. Հայությունը սփռված է աշխարհի մոտ 100 երկրներում, որոնք գտնվում են աշխարհաքաղաքական եւ քաղաքակրթական տարբեր գոտիներում: Ստեղծված իրավիճակը որոշակի ազդեցություն է գործում հայության տարբեր հատվածների աշխարհընկալման, հոգեկերտվածքի, մշակութային, սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կողմնորոշումների վրա: Այս ամենը հաղորդակցական բնույթի լուրջ խնդիրներ է առաջացնում Հայության տարբեր հատվածների միջեւ:

3. Հայությունը բաժանված է նաեւ ըստ լեզվա-կրոնական հատկանիշների. այս հանգամանքը խնդրահարույց է հատկապես իսլամացած (թրքացած, քրդացած կամ արաբացած) հայերի պարագայում:

Վերոնշյալ անբարենպաստ գործոնների ցուցակը կարելի է մեծացնել: Սակայն դրանց զուգահեռ կան նաեւ դրական գործոններ, որոնք ընդհանրացնում, ինտեգրում եւ միավորում են Հայությունը.

- ❖ Ընդհանուր Հայրենիքի գաղափարը եւ ՀՀ ու ԼՂՀ առկայությունը
- ❖ Հայկական ուրույն քաղաքակրթության գաղափարը
- ❖ Ցեղասպանության հիշողությունը եւ Հայ դատը
- ❖ Ղարաբաղի հետ կապված գործընթացները:

Նկատենք, որ վերջին երկու գործոններն այսօր դարձել են գլոբալ քաղաքականության ուշադրության առարկա, ինչը խիստ նպաստավոր է հայության տեղեկատվական ինտեգրման տեսանկյունից:

Չայության ռեսուրսների խնդիրը

Ազգային առանձնահատկություններից բացի, Չայության ՏԱ համատեքստում առկա են նաև այլ խնդիրներ, որոնք կրում են օբյեկտիվ բնույթ եւ պայմանավորված են գլոբալ զարգացումներով:

Չամաձայն փորձագիտական կանխատեսումների, անկախ պետությունների թիվը դեռևս պահպանելու է աճի իր միտումները, սակայն գոյություն ունեցող մի շարք ազգեր եւ պետություններ, ռազմավարական հեռանկարում, անխուսափելիորեն կորցնելու են էթնիկ-քաղաքակրթական իրենց ինքնությունն ու վերածվելու են համաշխարհային քաղաքականության եւ տնտեսության օբյեկտների (նման միտումներ մենք տեսնում ենք, մասնավորապես, Եվրոպայում):

Այս խնդիրը վերաբերում է հատկապես ոչ մեծ ազգերին եւ պետություններին: Նման միտումներին հակազդելու համար պահանջվում է ռեսուրսների որոշակի չափ, որոնց բոլոր ազգերը չէ, որ տիրապետում են: Անհրաժեշտ ռեսուրսների համախմբից թվարկենք հետեւյալները.

1. Քաղաքակրթական կամ հոգեւոր-մշակութային ոլորտին պատկանող ռեսուրսներ:

2. Տեխնոլոգիական կամ այլ խոսքերով՝ մարդկային, մտավոր, գիտատեխնիկական եւ տեղեկատվական ռեսուրսներ:

3. Նյութական՝ ձեռներեցային, արտադրական-առեւտրային, ֆինանսական եւ նման այլ կարողություններ:

4. Կազմակերպական ռեսուրսներ. այսինքն՝ կազմակերպվելու, կենսունակության համար անհրաժեշտ կառույցներ (այդ թվում՝ պետություն, համայնք, քաղաքական, տնտեսական, հասարակական կազմակերպություններ եւ ձեւաչափեր) կազմակերպելու ու դրանց համապատասխան ազգային գործառույթներ իրագործելու ունակությունը եւ կարողությունը:

Կենսունակության համար անհրաժեշտ ռեսուրսների համատեքստում Չայաստանը եւ Չայությունը փոքր-ինչ յուրօրինակ ու ոչ այնքան միանշանակ կարգավիճակ ունեն: Մենք ակնհայտորեն տիրապետում ենք քաղաքակրթական ռեսուրսների, մասամբ՝ տեխնոլոգիական, գրեթե բավարար են տեղեկատվական ռեսուրսները, կարծես թե բավարար են նաև նյութական ռեսուրսները: Որոշակի խնդիրներ առկա են կազմակերպական կամ այլ խոսքերով՝ մենեջմենթի ոլորտում: Չարկ է շեշտել, որ թերացումն այս բնագավառում կարող է սկզբունքային նշանակություն

ունենալ. կազմակերպական կարողությունները սահմանափակում են մնացած ոլորտների գործառույթների արդյունավետությունը:

Անշուշտ, Հայությունը զուրկ չէ կազմակերպական ունակություններից. եթե դրանք չլինեին, ապա մենք հազարամյակների պատմություն չէինք ունենա: Միեւնույն ժամանակ, ոչ էքստրեմալ պայմաններում մենք երբեմն ցուցաբերում ենք համախմբվելու անկարողություն, ինչը բացասական ազդեցություն է թողնում, մասնավորապես, Հայության տեղեկատվական կազմակերպման գործընթացների վրա:

Հայության տեղեկատվական ոլորտի խնդիրները

Կազմակերպական ոլորտի կարգավորումը ենթադրում է հնարավորինս հստակեցնել եւ համակարգել Հայության SU խնդիրները: Դրանք, առաջին մոտավորությամբ, հետեւյալն են.

1. Հայաստանի եւ Հայության վերաբերյալ տեղեկատվական իրազեկման ապահովումը բուն Հայության ներսում:

2. Հայության համապատասխան իմիջի մշակումը եւ, որպես գիտակցության բաղադրամաս, այդ իմիջի ներդրումը Հայությունում եւ այլ հանրություններում:

3. Ժամանակակից տեղեկատվական քաղաքականության տարրերի հայեցակարգային եւ տեխնոլոգիական մշակումն ու դրանց կիրառումը Հայության քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային եւ այլ ոլորտների կազմակերպման գործում:

4. Համահայկական ցանցակենտրոն համակարգի հայեցակարգային մշակումը եւ դրա միջոցով Հայության միասնական տեղեկատվական դաշտի ձեւավորումը:

Այս վերջին կետը պետք է ընդունել որպես գերխնդիր, որն անմիջական առնչություն ունի տեղեկատվական համատեքստում Հայության կազմակերպման խնդիրներին:

Ցանցակենտրոն համակարգ

Արդի աշխարհում այսպես կոչված ցանցակենտրոն կազմակերպման ձեւը համարվում է ամենակատարյալը: Նման համակարգում կազմակերպման ենթակա սուբյեկտները, լինելով ցրված, սակայն ունենալով ինքնուրույն գործելու իրավունքի եւ կարողությունների բարձր մակարդակ, գտնվում են միասնական տեղեկատվական դաշտում՝ ցանցում:

Նրանք ունեն միասնական դեկավարություն, միասնական նպատակներ եւ խնդիրներ: Ավելորդ չէ նշել, որ կազմակերպման ցանցակենտրոն հայեցակարգն ընդունված է ԱՄՆ-ի եւ այլ առաջատար տերությունների կողմից, որպես իրենց աշխարհաքաղաքականության եւ, մասնավորապես, զինված ուժերի կազմակերպման մեթոդ: Որոշ հետազոտողներ անգամ գտնում են, որ ցանցային կազմակերպման արդյունքում ձեւավորվում է այսպես կոչված թիմային գերինտելեկտ, որը հնարավորություն է տալիս լուծել առանձին անհատների համար անհասանելի խնդիրներ:

Խիստ կարելու է այն, որ ցանցակենտրոն ձեւաչափը մեծ կայունություն ունի. եթե անգամ կառավարվող բաղադրիչներից որեւէ մեկը կամ մի քանիսը շարքից դուրս են գալիս, ապա մնացածները, բարձր ինքնավարության շնորհիվ, կարողանում են արդյունավետ շարունակել իրենց գործունեությունը: Մասնավորապես, եթե ցանցակենտրոն համակարգը կիրառվի Հայության պարագայում, ապա այն թույլ կտա պահպանել համակարգի կենսունակությունը անգամ կառավարման կենտրոնի վերացման պարագայում, քանի որ ցանցի մնացյալ անդամները կարող են շարունակել իրենց գործունեությունը՝ ելնելով այն ռազմավարական-գաղափարախոսական դրույթներից, որոնք դրված են համակարգի հիմքում:

ՄԵՆՔ ԷԼ ԵՆՔ ՀԱՅ...

Ծպտված կամ բռնի կրոնափոխված հայերի հիմնախնդրի ամենակարեւոր ասպեկտներից է ազգային ինքնագիտակցության մակարդակի կամ շերտերի պահպանման աստիճանը: Ինչպես ցույց են տալիս զանազան աղբյուրներ եւ փաստեր, տարբեր են այն ազգակները, որոնք մղում են ազգային ինքնագիտակցության զարթոնքին կամ իրական ինքնության ճանաչմանը, մի բան, որը հետագայում կարող է ունենալ տարբեր դրսեւորումներ:

«Հանրապետական» ամսաթերթի 2007թ. թիվ 4-ում մենք անդրադարձել էինք Թուրքիայում գործող ձախ ծայրահեղական կազմակերպություններին տարբեր պատճառներով անդամակցած հայ «ավազակների» եւ ծպտյալ կամ իսլամացված հայ բնակչության փոխհարաբերությունների հարցին: Այս «ավազակների» մեջ հատկապես առանձնանում է Օրհան Բաքըրը (Արմենակ Բաքըջյան), որը լինելով նաեւ Հրանտ Դինքի ընկերը, դեռեւս ուսումնառության տարիներից փորձել է կապեր հաստատել ծպտյալ հայերի հետ: Եվ այս հանգամանքը, ինչպես կտեսնենք ստորեւ, երբեմն խթան է հանդիսացել իրական ինքնությունը վերագտնելու համար:

Ստամբուլի «Ակոս» թերթի թիվ 478-ում տպագրվել է մի հոդված, որի հեղինակը՝ **Ազատ Դեմիրը**, պատմում է իր իրական ինքնությունը վերագտնելու մասին, որում անուղղակիորեն դեր է ունեցել Օրհան Բաքըրը: Դերսինցի ծպտյալ հայի զավակի պատմությունը բազմաթիվ նմանատիպ պատմություններից ընդամենը մեկն է: Ստորեւ թուրքերենից թարգմանաբար եւ մասնակի կրճատումներով ներկայացնում ենք հիշյալ հրապարակումը:

Ռ.Մ.

Մայիս ամիսն էր, այդ օրը նախիրը ուշ էինք տուն բերել: Երբ վերադարձանք, գյուղը կարծես ուրիշ լիներ: Գյուղամիջում մեր գյուղի ամենահետաքրքրասեր կինը, մոտենալով ինձ, ասաց. «Ազատ, ձեր տուն «հեղափոխականներ» են եկել»: Ես արագ-արագ գնացի տան կողմը: Տանը չորս հոգի էին. երկու՝ աղջիկ, երկու տղա: Պետությունը նրանց անվանում էր «ահաբեկիչ, ավազակ», իսկ տարածքի ժողովուրդը՝ «հեղափոխական»: Կուզը դուրս ընկած, հիվանդ եւ տարեց հայրս

նույնպես իրեն տարօրինակ էր պահում: Նա, որ սովորաբար հազիվհազ էր կարողանում տեղից վեր կենալ, այժմ ուղղակի «սպասարկում» էր հյուրերին: Նրանց համար մորթել էր այդ տարի վաղ ծնած մեր այծի ուլին, ինքը քերթել եւ իր մեթոդներով եփել էր: Սակայն ինքը, չնայած հյուրերի եւ ավագ քրոջս բոլոր պնդումներին, ոչ միայն չէր ուտում, այլեւ անգամ սեղան չէր նստում: Մանկան հրճվանքը դեմքին՝ անընդհատ կրակին միս էր դնում, եփում, մատուցում, ապա հյուրերին հարցնում, թե էլ ինչի կարիք ունեն, եւ մեզ էլ հանձնարարում էր բերել տանը եղած բոլոր ուտելիքները: Ասես այս բոլորը բավարար չէր, երբեմն-երբեմն էլ շոյում էր խմբի ղեկավար երիտասարդի գլուխը:

Ճաշեցինք, թեյ խմեցինք, եւ տունը շուտով վերածվեց հարսանքավորի տան: Ջրույցները, քննարկումները, հետաքրքիր հարցերը հաջորդում էին մեկը մյուսին: Խմբի ղեկավարի դեմքը ծանոթ էր թվում, կարծես մի տեղ տեսել էի: Հայրս նրա ձեռքը բռնած՝ կողքի սենյակ տարավ: Ուշք ու միտքս նրանց հետ էր: Սակայն դուռը հետեւից փակված էր հորս ձեռնափայտով... Ներսից ձայն չէր լսվում, միայն լացանման մի հեկեկոց էր ականջիս հասնում: Խուճապահար լինելով՝ ամբողջ ուժով դուռը հրեցի եւ սենյակ մտա: Հայրս նրան առել էր ծնկներին՝ մի կողմից շոյում էր, մի կողմից լաց լինում: Ես այս տեսարանից ապշահար եղա: Ի՞նչ էր եղել հորս: Այս մարդն ո՞վ էր: Ամենակարեւորը՝ որտեղի՞ց էր ճանաչում: Այդ պահի հուզումով եւ վախով բղավեցի. «Ի՞նչ է տեղի ունենում, հայրիկ»: Հայրս ասես ինձ չէր նկատում, վերացել էր: «Այստեղ ի՞նչ է կատարվում, հայրիկ, ինձ չե՞ս բացատրի», - կրկին բղավեցի ես: Հայրս ոչ զայրացավ, ոչ էլ արձագանքեց: Սրբեց արցունքները, ծխախոտից մի ծուխ քաշեց, ձեռքի շարժումով ինձ իր մոտ կանչեց եւ ասաց. «Ազատ, տղաս, այս երիտասարդը Օրհան Բաքըրն է»:

1978 թվականին, երբ Օրհանը Բուջայի բանտում էր, ատանը հեռացնելու պատրվակով Էգեյան համալսարան էր ուղարկվել, որտեղից կազմակերպության ընկերները նրան փախցրել էին: Այս փախուստի ընթացքում Օրհանին դիմադրող մի զինվոր սպանվել էր: Դեպքից հետո մամուլում հրապարակվում էին Օրհանի նկարները, եւ ասվում էր, թե նա «ինչքան արնախում», «կատաղի հայ ահաբեկիչ» է: Նրա նկատմամբ մահվան դատավճիռ էր կայացվել, եւ նրան ամենուր փնտրում էին: Այո, ես նրան ճանաչում էի թերթերում տպագրված նկարներից, սակայն, այնուամենայնիվ, չէի կարողանում ըմբռնել, թե ինչու էր հայրս արտասվում: Օրհանի խումբը գյուղացիներից հեռանալու թույլտվություն խնդրեց՝ ամեն ինչի համար շնորհակալություն հայտնելով, առանձին-առանձին բոլորի ձեռքը սեղմելով: Օրհանը, որը համբուրեց հորս ձեռքը, մի կերպ

գլուխն ազատեց նրա գրկից: Հայրս շնչում էր, ասես աղոթում էր մի լեզվով, որը ոչ մեկը չէր հասկանում:

Հորս հետ երկար ժամանակ լուռ նստեցինք: Ձեռքի ցախով կրակը խամնելիս՝ կրկին այդ տարօրինակ լեզվով «Բինգոյլ» երգն էր երգում: Այդ պահին հայրս իմ իմացածը չէր. գեղեցիկ էր, արտասովոր, սակայն ամենակարեւորն այն էր, որ առաջին անգամ էր այդ երգը երգում: Իսկ ես՝ նրա 29-ամյա որդին, այդ երգը եւ դրա բառերն առաջին անգամ էի լսում: Այլեւս չկարողացա համբերել, հորս երգն ընդհատեցի եւ հարցրի. «Հայրիկ, Աստծո սիրուն, ի՞նչ է տեղի ունենում: Իմ ոչ մի հարցին չպատասխանեցիր՝ հասկացա, սակայն այս լեզուն, որով երգում ես, ո՞ւմ լեզուն է, գոնե դա ասա»:

Հայրս երգը ավարտեց, շրջվեց, ինձ նայեց: Արցունքներն ասես լվացել էին նրա աչքերը: Այնպիսի գեղեցիկ եւ անկեղծ մի հայացք նետեց, որ այդ պահը երբեք չեմ մոռանա: Շրթունքներին թույլ ժպիտ երեւաց. «Տղաս, սա մեր լեզուն է», – պատասխանեց նա եւ հետո ասես դեմքին թախիծ իջավ, լռեց:

Չնայած իմ համառ պնդումներին եւ նույնիսկ բարկանալուն՝ ոչինչ չասաց: Միայն տեղից ուղղվելով՝ նայեց երեսիս եւ ասաց. «Ազատ, մի օր քեզ ամեն ինչ կպատմեմ, այդ օրը անպայման գալու է»:

Դրանից բավական ժամանակ անցավ: Գարնանը հաջորդեց ամառը, դրան էլ՝ աշունը: Հայրս այլեւս ինձ հետ չգրուցեց: Ամեն երեկո Հավլորիի կողմ գնալով՝ ավերված եկեղեցու ճիշտ եզրին նստում էր, ասես անընդհատ սպասում ինչ-որ մեկի գալուստին:

Իսկ ես հետաքրքրվում էի, թե ինչ պետք է լինի հորս «մի օր կասեմ» խոսքը եւ սպասում էի այդ պահին: Ի՞նչ գաղտնիք էր դա:

Այդ դառը եւ դաժան իրականությունը, որ հետո իմացա, «ծպտյալ քրիստոնյա» եւ «ծպտյալ հայ» հասկացություններն էին...

Օրհանի մահվան մասին տեղեկացանք ռադիոյով: Հայրս սաստիկ ցնցվել էր եւ գույնը գցել: Ինձ իր մոտ կանչեց եւ ասաց. «Ազատ... – թուրք կուլ էր տալիս, արտասվում եւ չէր կարողանում խոսել: Մարմնի բոլոր բջիջներով տառապում էր. «Օրհանը գնաց, ինձ նրա մոտ տար»: Մեքենա չկար: Հորս շալակելով Քարաքոչան կոչվող այդ անհիժված վայր ինչպե՞ս պետք է հասնեի: Բացի այդ, Օրհանի աճյունը չէին տվել, եւ «կատաղի հայ ահաբեկչին» ոստիկանությունն էր թաղել: Օրհանը կենդանության օրոք կտակել էր. «Եթե մեռնեմ, ինձ Ֆարաչի այս գազաթին թաղեք»: Նրա ընկերներն իրականացրին այդ կտակը եւ աճյունը ոստիկանության թաղած տեղից փախցնելով՝ թաղեցին Ֆարաչում:

Հուղարկավորությանը մասնակցելու համար երբ մեզ լուր տվեցին,

հայրս հազիվ էր շնչում: Ինձ կանչեց, ձեռքս իր անուժ ձեռքերի մեջ առավ եւ տնքալով ասաց. «Ազատ, որդիս, մենք էլ ենք հայ, գնա եղբորդ վերջին ճանապարհը դիր եւ վերդարձիր»:

Հազարավոր մարդիկ Օրհանի գերեզմանի շուրջն էին: Երբ վերադարձա, հայրս լալով արդեն ուժասպառ էր եղել: Չգիտեի՞նք՝ ցավերի՞ց, թե՞ Օրհանի վշտից գալարվում էր, կցկտուր խոսում: Եվ խեղճ հայրս այս ցավով ընդամենը չորս օր եւս կարողացավ դիմանալ: Մի առավոտ, երբ զարթնեցի՞նք, մահացել էր:

Հորս մահից հետո սկսեցի անընդհատ իմ իրական ինքնությանը հետաքրքրվել: Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ: Հայրս ինչո՞ւ էր իր իրական ինքնությունը թաքցրել, ինչո՞ւ էր մինչեւ այդ օրն ապրել եւ հետո միայն այդ ամենն ինձ պատմել: Սկսեցի իմ հարցերի պատասխանը որոնել հորս տարեկից ընկերների մեջ: Ինձ պատմեցին տեղի ունեցած այդ դառը օրերի մասին: Կոտորածի ժամանակ Դերսիմում ապաստանած 25-40 հազար հայ փրկվել էր: Դերսիմի որոշ ցեղեր էլ են նրանց հանդեպ բռնություն կիրառել, սակայն շատերն էլ լավություն են արել: Հորս նմանները շատ էին, եւ նրանք դերսիմցիների հանդեպ երախտագիտություն էին տածում:

Անպայման պետք է ի հայտ գան մարդիկ, որոնք կգրեն այս թաքցված իրականությունների մասին: Սա մեր գլխին եկել է, թող գոնե ուրիշ մարդիկ, հասարակություններ, ժողովուրդներ սա չտեսնեն...

Թուրքերենից թարգմանեց
Ռուբեն Մելքոնյանը

ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄՈՒՏՔԸ ԵՎՐՈՊԱ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

2008թ. մարտի 17-ին Իրանի մայրաքաղաք Թեհրանում ստորագրվեց առաջին միջազգային պայմանագիրը, համաձայն որի՝ Իրանը հնարավորություն կստանա բնական գազ արտահանել Եվրոպա: Պայմանագիրը ստորագրեցին Իրանի գազի արտահանման ազգային ընկերությունը եւ շվեյցարական *Elektrizitaetsgesellschaft Laufenburg* ընկերությունը: Այն ենթադրում է, որ սկսած 2009 թվականից՝ 25 տարվա ընթացքում, իրանական կողմը շվեյցարական ընկերությանը տարեկան մատակարարելու է 5.5 մլրդ մ³ գազ:

Պայմանագրի ստորագրմանը ներկա գտնվող Իրանի արտաքին գործերի նախարար Մ.Սոթաբին իր շվեյցարացի գործընկերուհի Մ.Քալմի-Ռեյի հետ բանակցություններից հետո հայտարարեց, որ ինքը ներկա է «պատմական նշանակության» մի իրադարձության, որը ոչ միայն նախանշում է Իրանի մուտքը եվրոպական գազի շուկա, այլ նաեւ դրսևորում է այն փոխադարձ հետաքրքրվածությունը, որ ունեն Շվեյցարիան եւ Իրանը: Մ.Քալմի-Ռեյն իր հերթին ընդգծեց, որ Շվեյցարիան չունի բավարար չափի բնական ռեսուրսներ եւ այդ պատճառով ստիպված է ավելի ակտիվ եւ շահագրգիռ էներգետիկ դիվանագիտություն վարել, եւ այս գործում Իրանը հուսալի գործընկեր է:

Նշենք, որ չնայած պայմանագիրը ստորագրել են իրանական եւ շվեյցարական ընկերությունները, դրա իրականացմանն ակտիվ մասնակցություն են ունենալու Թուրքիան եւ Յունաստանը, որոնց տարածքներով դեպի Եվրոպա է հոսելու իրանական գազը, ինչպես նաեւ Իտալիան, որի հյուսիսում շվեյցարական ընկերությունը կկառուցի 2 հազար Մվտ հզորությամբ ՁԷԿ, որը եւ կօգտագործի իրանական գազը՝ էլեկտրաէներգիա արտադրելու եւ Շվեյցարիա արտահանելու համար:

Իրոք, պայմանագրի ստորագրման նշանակությունը չի կարելի թերագնահատել: Այն կարելոր է մի քանի հիմնական պատճառներով.

1. Պայմանագիրն էներգետիկ երկարաժամկետ համագործակցությանը վերաբերող առաջին փաստաթուղթն է, որ Իրանը կնքում է եվրոպական երկրի հետ վերջին 30 տարիների ընթացքում:

2. Թուրքիայի հետ հարաբերություններում Իրանը հասավ իր հիմնական նպատակին. Անկարան հրաժարվում է նախկինում իր որդեգրած դիրքից, համաձայն որի՝ իրանական կողմը թուրքական

ընկերություններին պետք է էժան գնով գազ վաճառի, իսկ թուրքական ընկերությունները այն պետք է ավելի բարձր գնով վերավաճառեն եվրոպական սպառողներին: Իրանա-շվեյցարական պայմանագիրը ենթադրում է Թուրքիայի տարածքի եւ գազատարների օգտագործում զուտ տարանցման նպատակով, ինչը բխում է հենց Թեհրանի շահերից:

3. Իրանը դառնում է բուն Եվրոպայի տարածքում նոր էներգետիկ նախագծի իրականացման մասնակից: Խոսքը Տրանսադրիատիկ նոր գազատարի կառուցման մասին է, որը Հունաստանից ծովի հատակով պետք է ձգվի մինչեւ Իտալիա: Հենց այս գազատարի միջոցով Իրանը հնարավորություն պետք է ստանա իր գազը հասցնել եվրոպական սպառողներին: Այդ երկրի համար ավելի քան կարելու է այն հանգամանքը, որ ԵՄ էներգետիկ հարցերով հանձնակատարը ապրիլի սկզբին «բնական» համարեց իրանական ընկերությունների մասնակցությունն այս գազատարի կառուցման աշխատանքներին:

Ուշագրավ է այն, որ Իրանի ներկայացուցիչներն անցած տարի բանակցություններ են վարել նաեւ Ալբանիայի իշխանությունների հետ՝ հնարավոր էներգետիկ համագործակցության հարցի շուրջ: Նախատեսվում է, որ Տրանսադրիատիկ գազատարի կառուցմանը զուգահեռ պետք է կառուցվի նաեւ մեկ այլ գազատար՝ Հունաստանից Ալբանիա, եւ դրա միջոցով իրանական գազը կարող է արտահանվել բալկանյան ուղղությամբ, ինչն արդեն իսկ մարտահրավեր է ռուսական «Գազպրոմի» համար, որը նպատակ ունի պահպանել մենաշնորհային դիրքերը Բալկանյան թերակղզու գազի շուկայում: Համաձայն Իրանի ԱԳՆ նախարար Մ.Սոթաբքի՝ արդեն 2012 թվականին Իրանը հնարավորություն կունենա մինչեւ Հունաստան արտանդել տարեկան մոտ 12 մլրդ մ³ գազ, որի ընդամենը մի մասը կգնի շվեյցարական *Elektrizitaetsgesellschaft Laufenburg* ընկերությունը, իսկ մնացած մասը կվաճառվի այլ սպառողներին:

Իրանա-շվեյցարական պայմանագիրը «Եթե սարը չի գնում Մուհամեդի մոտ, Մուհամեդը կգնա սարի մոտ» թեւավոր խոսքի գործնական իրականացման դրսեւորումներից կարելի է համարել: Արդեն 10 տարի է, ինչ սկսվել են իրանա-եվրոպական բանակցություններն էներգետիկ համագործակցության հիմնախնդիրների շուրջ, սակայն քաղաքական նկատառումները հնարավորություն եւ ազատություն չեն տալիս եվրոպացիներին համաձայնության գալ իրանցիների հետ: Չնայած իրանական գազի ներկրումը կենսական նշանակություն ունի Եվրոպայի էներգետիկ անվտանգության համար, եվրոպա-իրանական համագործակցությունը մեծ մասամբ կախված է մնում իրանա-ամերիկյան հարաբերություններից: Թեեւ ֆրանսիական ընկերություններից շատերը, այդ թվում եւ նավթային

«Total»-ը, իրանցիների հետ արդեն մի քանի տարի է, ինչ համագործակցում են, սակայն նման օրինակները կարելի է մատների վրա հաշվել: Եվ այսպես կարող է շարունակվել այնքան, որքան կտեսի ԱՄՆ-Իրան հակամարտությունը: Հենց այս տեսանկյունից՝ իրանա-շվեյցարական պայմանագիրն այն կարելու ձեռքբերումներից մեկն է, որը հնարավորություն է տալիս իրանցիներին աշխուժացնել եվրոպացիների հետ էներգետիկ կապերը:

Նշենք, որ ԵՄ արտաքին հարաբերությունների գծով գլխավոր հանձնակատար Խ.Սոլանան իրանա-շվեյցարական պայմանագիրը համարել է «երկու կողմերի ներքին գործը», ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակն այն բնութագրել է որպես վտանգավոր, իսկ Շվեյցարիայում ԱՄՆ դեսպանը՝ հայտարարել, որ պետք է քննել, թե շվեյցարական ընկերության ստորագրությունը Իրանի հետ պայմանագրի տակ չի հակասում արդյոք Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ՄԱԿ ԱԽ-ի կողմից ընդունված բանաձեւերի պահանջներին: Ինչպես կարելի է նկատել, ԵՄ եւ ԱՄՆ մոտեցումները իրանա-շվեյցարական պայմանագրի նկատմամբ որակապես տարբերվում են:

Առնչությունը Հայաստանի հետ

Իրանա-շվեյցարական համաձայնագիրը, որքան էլ տարօրինակ թվա, անուղղակիորեն առնչվում է նաեւ Հայաստանին: Ստորագրելով պայմանագիրը՝ Իրանը ստանձնեց մի շատ կարելու պարտավորություն, որի իրականացումը կարող է դժվարությունների հանդիպել: Իրանա-թուրքմենական սրված հարաբերությունները թեհրանին ստիպելու են սեփական գազի պաշարների հաշվին բավարարել երկրի այն հյուսիսային նահանգների պահանջարկը, որոնք նախկինում օգտագործում էին թուրքմենստանից ստացվող գազը: Հենց այդ պահանջարկի բավարարման արդյունքում այս ձեռքան իրանական կողմը ստիպված եղավ սահմանափակել թուրքիային գազի մատակարարումը՝ չնայած առկա պայմանագրին:

Լինելով գազի պաշարների ծավալով աշխարհում երկրորդ պետությունը՝ Իրանը գազն արդյունահանելու, վերամշակելու եւ արտահանելու զարգացած միջոցներ չունի, եւ այս պարագայում շվեյցարացիների հետ կնքված պայմանագիրն էլ ավելի է բարդացնելու Իրանի՝ իր գործընկերների հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարումը: Սա, մեր կարծիքով, վերաբերում է նաեւ Իրան-Հայաստան գազատարին. եվրոպացիներին գազ մատակարարելը կարող է ազդել այլ ուղղություններով (նաեւ՝ հայաստանյան) իրանական գազի արտահանման կայունության վրա:

POST-KOSOVO. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԶԵՌԱՆԿԱՐԸ

Սարգիս Զարությունյան

Թեեւ Կոսովոյին վերաբերող մեր նախորդ հոդվածում («Post-Kosovo. փոփոխությունների ժամանակաշրջան». «Հանրապետական», թիվ 1, 2008թ.) որպես առանցքային հետեւություն էր ներկայացված այն դրույթը, թե Բալկաններում քաղաքական սահմանների փոփոխության արեւմտյան նախաձեռնությունը սցենարային տարբերակ է, որը բավական մեծ շանսեր ունի կիրառվելու աշխարհի այլ հատվածներին առնչվող Արեւմուտքի հաշվարկներում, սակայն Եվրոպայում ընթացող զարգացումների դիտարկումը թույլ է տալիս խոսել խնդրի նաեւ օբյեկտիվ կողմի մասին:

Մարտի վերջին Նորվեգիան դարձավ թվով 37-րդ պետությունը, որը ճանաչեց Կոսովոյի անկախությունը: Չնայած ի սկզբանե պարզ էր, որ Կոսովոյի խնդրի նման հանգուցալուծումը իր հետեւանքները կունենա եվրոպական քաղաքականությունում, սակայն ձեւավորվող իրավիճակում պետք է լուրջ ուշադրություն դարձնել նաեւ հետեւյալ կետերին.

❖ թեեւ անցած տարվա դեկտեմբերի 13-ին Լիսաբոնում Եվրամիության (ԵՄ) նոր հիմնարար փաստաթղթի ստորագրումը դիտարկվեց որպես 2005թ. Ֆրանսիայում ու Նիդեռլանդներում Եվրասահմանադրության տապալմամբ սկիզբ առած ճգնաժամի հաղթահարում, սակայն ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս ավելի շատ փաստեր, որոնք վկայում են, թե եվրոպական քաղաքականության մեջ ինտեգրման գաղափարը դադարում է (կամ դադարել է) լինել դիմամիկ աճ գրանցող միտում,

❖ ուրվագծվող իրավիճակում շարժիչ գործոնների դերում են հանդես գալիս զարգացումներն Արեւելյան Եվրոպայում ու ֆրանսիական արտաքին նոր քաղաքականությունը:

Իրավիճակն Արեւելյան Եվրոպայում

Ընթացող զարգացումները Եվրոպայի արեւելյան հատվածում այն առաջին ցուցիչներն էին, որոնք թույլ տվեցին խոսել եվրաինտեգրման գործում ի հայտ եկող խնդիրների մասին: Ինչպես նշում է ռուս հեղինակ Օլեգ Նեմենսկին, Արեւելյան Եվրոպայի ողջ տարածաշրջանում ընթանում

է Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքների վերինատատվորում, նրա հերոսների ու գաղափարների վերականգնում:

Այն իրավիճակում, որով այսօր առանձնանում է Արեւելյան Եվրոպան, կարելու էր են խաղում երեք հիմնական գործոններ.

- ❖ աջ ազգայնական ուժերի ազդեցության աճը արեւելաեվրոպական քաղաքականությունում,

- ❖ հատկապես Կոսովոյի անկախացումից հետո՝ վերստին օրակարգ մտած «ազգային հարցերը» տարածաշրջանում,

- ❖ ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին անդամակցելուց հետո լեհական աշխարհաքաղաքական սեփական նախագծի ի հայտ գալը (ուղղված առաջին հերթին Բելառուսն ու Ուկրաինան Վարշավայի ազդեցության ներքո գցելուն):

Թեև ողջ եվրոպական քաղաքականության մեջ աջ ազգայնական ուժերի ազդեցության աճի մասին խոսելիս՝ առաջին հերթին նշում են Արեւմտյան Եվրոպայում՝ Ֆրանսիա, Նիդեռլանդներ, անգամ Մեծ Բրիտանիա, տեղի ունեցող զարգացումները, սակայն այդ իմաստով պատկերն ավելի տպավորիչ է աշխարհամասի արեւելյան հատվածում: Ի տարբերություն Արեւմտյան Եվրոպայի, Արեւելյան Եվրոպայում՝

- ❖ նման ուղղվածության քաղաքական ուժերի ներկայությունը կենտրոնական կառավարություններում ավելի շատ է եւ տեղեկատվական դաշտում չի ընկալվում որպես ծայրահեղ երեւույթ,

- ❖ աջ ազգայնական ուժերի ազդեցության աճը տեղի է ունենում ոչ թե որպես հակազդեցություն, որն առաջանում է օտար մշակույթին պատկանող խմբերի ներգաղթի արդյունքում, այլ հրապարակ է իջնում որպես պետության ռազմավարական զարգացման տարբերակներից մեկը:

Արեւելյան Եվրոպայում աջ ազգայնական բնույթի քաղաքական ուժի ազդեցության մեծացման ամենատպավորիչ օրինակն ընդունված է համարել Լեհաստանի վերջին երկու խորհրդարանական ընտրությունների արդյունքում այդ երկրի քաղաքական կյանքում լուրջ դիրքեր զբաղեցրած Կաչինսկի եղբայրների կուսակցության (PiS) դեպքը: Չնայած վերջին՝ 2007թ. օրենսդիր մարմնի ընտրությունների արդյունքում այն հայտնվեց ընդդիմության մեջ, սակայն կուսակցությունը երկրորդն է լեհական խորհրդարանում իր ունեցած աթոռների թվով, 2005–2007թթ. ընթացքում գլխավորում էր կառավարությունը, իսկ կուսակցության առաջնորդներից Լեխ Կաչինսկին ներկայում Լեհաստանի նախագահն է:

Սակայն լեհական օրինակը եզակի չէ: Իրավիճակն, ըստ էության, ընդհանուր է դառնում արելեւաեվրոպական շատ երկրների համար:

❖ Սլովակիայում վերջին՝ 2006թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում աջ ազգայնական «Սլովակյան ազգային կուսակցությունը» (SNS) գրավեց երրորդ տեղը եւ այժմ կոալիցիոն կառավարության մասն է:

❖ Չեխիայում ի սկզբանե ազատական «Քաղաքացիական ժողովրդավարական պլատֆորմ» (ODS) կուսակցությունն աստիճանաբար վերածվեց աջ պահպանողական կուսակցության՝ ազգայնական դրույթներով, որը դեմ է դուրս գալիս Եվրասահմանադրությանը, Եվրոյին ու Եվրահիմնադրման խորացմանը. վերջին՝ 2006թ. ընտրություններում ODS-ը գրավել է առաջին տեղը եւ այժմ կառավարության գլուխն է:

❖ Ռումինիայում նախագահական վերջին ընտրությունների ժամանակ տպավորիչ արդյունքներ է ցույց տալիս աջ ազգայնական «Մեծ Ռումինիա» (PMR) կուսակցության առաջնորդ Կոռնելիու Վադիմ Տուդորը, ով, օրինակ, 2000թ. ընտրություններում գրավել էր երկրորդ տեղը՝ դուրս գալով երկրորդ փուլ, սակայն պարտվեց Իոն Իլիեսկուին (նախագահական վերջին ընտրություններում՝ 2004թ., Տուդորը երրորդն էր):

❖ Եվ վերջապես, Սերբիայում 2008թ. կայացած նախագահական ընտրությունների արդյունքում ծայրահեղ ազգայնական Տոմիսլավ Նիկոլիչը կարողացավ երկրորդ փուլում հաղթանակ տարած Բորիս Տադիչից հետ մնալ ընդամենը 2.5%-ով:

Արելեւյան Եվրոպայում փոփոխվող իրավիճակի երկրորդ կարեւոր գործոնը Կոսովոյի անկախացումից հետո նոր ազդակ ստացած տարաբնույթ «ազգային հարցերի» խնդիրն է, որը նախորդ ամիսների ընթացքում իրեն հատկապես ցույց տվեց Ռումինիայում, Սլովակիայում եւ Սերբիայում՝ հունգարական հարցի, Մակեդոնիայում՝ ալբանական հարցի, Հունգարիայում, Սլովակիայում, Ռումինիայում՝ զնչունների հարցի պարագայում:

Փոփոխություն ֆրանսիական արտաքին քաղաքականության մեջ

Այս տարվա մարտի 14-ին Բրյուսելում ընթացող ԵՄ հերթական գագաթաժողովի ժամանակ հայտարարվեց «Միջերկրածովյան միության» ստեղծման մասին, որի մեջ, բացի ԵՄ 27 անդամ երկրներից, պետք է մտնեն նաեւ միջերկրածովյան ավազանի 12 պետությունները: Նախա-

տեսվում է, որ կազմակերպության հիմնադրման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա ս.թ. հուլիսի 13-ին Փարիզում:

Չնայած այն հանգամանքին, որ «Միջերկրածովյան միության» գաղափարն ի սկզբանե Փարիզին էր, Մեծ Բրիտանիան ու Գերմանիան կարողացան առաջ տանել իրենց նախագիծը, ըստ որի՝ նոր միության մեջ պետք է մտնեն ԵՄ անդամ բոլոր երկրները եւ ոչ թե միայն Միջերկրական ծով ելք ունեցողները: Թեեւ ենթադրվում է, որ Սարկոզիի վարչակազմի նախաձեռնությունը մի մեծ մասով կորցրեց այն նպատակը, որը նրա առջեւ դրել էր ֆրանսիական դիվանագիտությունը, սակայն գլխավորն այստեղ այն է, որ ԵՄ երկու առանցքային երկրներից (Գերմանիա, Ֆրանսիա) մեկը որոշել էր հանդես գալ նման նախաձեռնությամբ:

Ընդհանրապես, ղեկավարի փոխվելը Ելիսեյան պալատում նշանավորվեց Փարիզի արտաքին քաղաքական մոտեցումներում ի հայտ եկած լուրջ նորություններով: Սարկոզիի նախագահության առաջին ամիսները բնորոշվեցին ատլանտյան ուղղվածության կոնկրետ քայլերով, որոնց վառ դրսևորումները եղան Իրանի, Լիբանանի հարցերում ԱՄՆ քաղաքականության հետ մերձեցումը (բոլորն են հիշում 2007թ. աշնանը պաշտոնական Փարիզի աննախադեպ կոշտ հայտարարությունները Թեհրանի նկատմամբ) եւ ՆԱՏՕ-ի ռազմական կառույցին վերամիանալու Փարիզի նախաձեռնությունը (Ֆրանսիան այդ կառույցից դուրս էր եկել 1966թ., եւ այս մարտին Սարկոզիի լոնդոնյան այցելության հիմնական նպատակը հենց դա էր):

Չետելությունները երկուսն են.

❖ հաշվի առնելով Ֆրանսիայի դերը ԵՄ-ում՝ Փարիզի արտաքին քաղաքականության մեջ նման փոփոխությունների ի հայտ գալը կարող է վկայել, որ այնտեղ լուրջ խնդիրներ են տեսնում Եվրախնտեգրման հարցում (ի դեպ, այս ֆոնին բոլորովին ուրիշ կերպ է դիտվում 2005թ. Ֆրանսիայում Եվրասահմանադրության տապալումը),

❖ եթե Փարիզը որոշել է հետ կանգնել Եվրոպական միասնական ռազմավարությունից կամ գոնե սառեցնել այդ ուղղությունը եւ նպատակ ունի զարգացնել աշխարհաքաղաքական սեփական նախագծերը, ապա ո՞րն է լինելու Գերմանիայի քաղաքականությունը եւ առաջին հերթին՝ իր ռազմավարության համար ավանդական հանդիսացող Արեւելյան Եվրոպայում:

**ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ.
ՀԱԿԱՍԵՄԻՏԻՉՄ
Սուրեն Մանուկյան**

Հակասեմիտիզմը մարդկության պատմության ամենահետաքրքիր եւ վիճահարույց երեւոյթներից մեկն է: Հրեաների նկատմամբ առանձնակի՝ բացասական եւ նույնիսկ թշնամական վերաբերմունքը բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա է դարձել, իսկ հաճախ էլ օգտագործվել քաղաքական նպատակներով:

Հակասեմիտիզմն իբրեւ ավանդույթ

Հակասեմիտիզմն, անշուշտ, պատմական արմատներ ունի: Հրեաների հետապնդման մասին հիշատակումներ կան դեռ Հին Կտակարանում: Հին դարերում հրեաները հստակորեն առանձնանում էին Հռոմեական աշխարհի մյուս ժողովուրդներից եւ իրենց ինքնատիպության պատճառով ճնշումների ենթարկվում, որոնք հաճախ վերածվում էին կոտորածների, ինչպես, օրինակ՝ Կալիգուլա եւ Դոմետիանոս կայսրերի օրոք: Քրիստոնեության հաղթանակից հետո իրավիճակը չփոխվեց: Ճնշումները շարունակվում էին, ավելացան իրավական, ունեցվածքային, կրոնական ծիսակարգի հետ կապված սահմանափակումները:

Վաղ միջնադարում հրեաների ճնշումները Եվրոպայում հասան գագաթնակետին: Անգլիայում, Ֆրանսիայում եւ Գերմանիայում շատ հրեական համայնքներ ժամանակ առ ժամանակ ուղղակի ոչնչացվում էին: Այն տարածքներում, որտեղ հրեաներին տրվում էր կյանքի իրավունք, նրանց արգելվում էր ապրել հատկացված որոշակի տարածքից դուրս: Նրանք զրկված էին գրեթե բոլոր իրավունքներից, նրանց տնտեսական գործունեությունը սահմանափակվում էր: Իտալական քաղաքներում՝ 16-րդ դարից հրեաները տեղավորվեցին հատուկ թաղամասերում՝ գետտոներում. այրվում էր հրեական գրականությունը, նրանց ստիպում էին քրիստոնեություն ընդունել:

Բացի ծիսական, լեզվական եւ կրոնական տարբերություններից, Եվրոպայում պարբերաբար տարածվում էին հրեաների մասին առասպելականացված պատկերացումներ: Այսպես, 12-րդ դարից տարածվեց հայտնի մեղադրանքն այն մասին, որ հրեաները ծիսական նպատակներով

օգտագործում են քրիստոնյա մանուկների արյունը: 1348թ. ժամտախտի համաճարակի ժամանակ հրեաներին մեղադրեցին ջրհորները թունավորելու մեջ, եւ գերմանական շատ քաղաքներում նրանց կոտորեցին ու խարույկի վրա այրեցին: Այս մեղադրանքներին գումարվում էր նաեւ հրեաների տնտեսական գործունեության դիվականացումը: Քանի որ քրիստոնյաներին չէր թույլատրվում վաշխառությամբ զբաղվել եւ տոկոսով փող տալ, Եվրոպայում դրանով զբաղվում էին միայն հրեաները, եւ հետեւաբար աճում էր նաեւ նրանց նկատմամբ սոցիալական ատելութունը, քանի որ նրանց հարստանալը շատերի կարծիքով անազնիվ էր: Այս ամենն ուղեկցվում էր միջնադարյան եվրոպական մշակույթում հրեայի բացասական կերպարի ստեղծումով:

Վերաբերմունքը հրեաների նկատմամբ ավելի վատացավ նոր դարերում, եվրոպական ազգայնականության առաջացման հետ մեկտեղ: Առաջացան ռասիստական տեսություններ, որոնք հայտարարեցին, թե սեմիտները ցածր ռասայի ներկայացուցիչներ են: Գերմանիայում եւ Յուճարիայում հիմնվեցին կուսակցություններ, որոնք սկսեցին քարոզել հակասեմիտիզմ, նրանցից մի քանիսը նույնիսկ տեղեր ստացան խորհրդարաններում: Ռուսաստանում եւ Ռումինիայում հակասեմիտիզմը գրեթե պետական մակարդակով էր իրականացվում: Հենց այս ընթացքում առաջանում է «հակասեմիտիզմ» տերմինը, որն առաջին անգամ կիրառում է գերմանական լրագրող Վիլհելմ Մարը՝ իր կողմնակիցներին անվանելով «հակասեմիտական լիգա»: Գրեթե բոլոր խոշոր կուսակցությունները Գերմանիայում եւ Ավստրո-Յուճարիայում իրենց ծրագրերում ընդգրկել էին հակասեմիտական պահանջներ: Ռուսաստանում հրեաները հռչակվեցին «պարագիտ տարրեր, որոնք շահագործում են տեղաբնիկներին», երկրում տեղի ունեցավ հրեական «պոգրոմների» մի քանի ալիք:

Ռուսական հեղափոխությունից հետո Եվրոպայում հակասեմիտիզմը խորացավ, քանի որ թվում էր, թե «սիոնիստական իմաստունների» կանխագուշակումները սկսել են իրականանալ. ռուսական, բավարական եւ հունգարական հեղափոխություններում, ինչպես նաեւ առաջացած կոմունիստական կուսակցություններում հրեաները մեծ ազդեցություն ունեին:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ավելի մեծ տեղ են ստանում ռասայական տեսությունները, եւ հենց հրեաներն են համարվել բոլոր քաղաքական եւ տնտեսական դժվարությունների պատճառ: Պատահական չէ, որ Գերմանիայում իշխանության եկած նացիստական կուսակցության արտաքին քաղաքական հայեցակարգում հակասեմիտիզմը գրավեց ամենակարեւոր տեղը: Իր «Մայն կամպֆ»-ում Հիտլերը

հստակորեն ձեւակերպեց հրեատյացությունը որպես գաղափարախոսություն: Այն տարածվեց նաեւ այլ երկրներում, որտեղ հրեաներին սկսեցին վտարել պետական եւ հասարակական աշխատանքից, ավելացվեցին հարկերը, սահմանափակվեցին նրանց իրավունքները:

Հակասեմիտիզմի վերափոխումը՝ հակասիոնիզմ

Երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ընթացքում ոչնչացվեց Արեւելյան Եվրոպայի գրեթե ամբողջ հրեականությունը, Եվրոպայում հավաքական մեղքի զգացում առաջացրեց, որն իր հետ բերեց հակասեմիտիզմի նվազում: Նույնիսկ նեոֆաշիստական կուսակցություններն աշխատում էին խուսափել հակասեմիտական գաղափարներից:

20-րդ դարի 60-ական թթ. հակասեմիտիզմը որոշակիորեն վերափոխվեց: Հրեական պետության ստեղծումից եւ Վեցօրյա պատերազմից հետո հակասեմիտիզմը ստանում է հակասիոնիզմ անունը. վերջինս, սակայն, օգտագործում է ավանդական հակասեմիտական տերմինաբանությունը: Նրա տարածման հիմնական կենտրոնները երեքն էին՝ արաբական պետությունները, ԽՍՀՄ-ը եւ Արեւելյան Եվրոպայի երկրները, «նոր ձախերի» խմբավորումները Եվրոպայում, որոնք հանդես են գալիս պաղեստինցիների պաշտպանությամբ եւ դասական հակասեմիտական կարգախոսներով (հրեաները պարագլխուներ են, շահագործողներ եւ ձգտում են իշխել ամբողջ աշխարհին):

Արաբների նկատմամբ տարած հաղթանակներից հետո վերացավ հրեաների զոհի կերպարը: Այն վերափոխվեց մի նոր ձեւի, որն իր արտահայտությունը գտավ ռեւիզիոնիզմի (երբ կասկածի տակ սկսեցին դրվել հրեական ժողովրդի Հոլոքոստի որոշակի տարրեր), ինչպես նաեւ «սիոնիստական մեղքերի» պարզաբանման մեջ, ինչն իր հերթին բացատրվում էր հրեական ժողովրդի «ազգային գծերով» (ագրեսիվություն, մեծամտություն, ժլատություն) եւ հրեական կրոնի «ռասիստական էությունը»: Այս ֆոնին հատկանշական են մի շարք դեպքեր: Օրինակ, դ՛Գոլի հայտարարությունը, որում նա մեղադրում էր Ֆրանսիայի հրեաներին երկակի հավատարմության եւ Իսրայելին ավելի ակտիվ աջակցելու մեջ: Կամ գերմանական ռազմական ուսումնարանի կուրսանտների կազմակերպած «հրեաների ցուցադրական հրկիզումը»: Հենց Ֆրանսիայում է գործում երեւի Եվրոպայի ամենակտիվ հակասեմիտական կուսակցությունը՝ Ազգային ճակատը, որը պնդում է, որ վերահսկելով ազգային ՁԼՄ-ն՝ հրեաները վերահսկում են ֆրանսիացիների ուղեղները:

Հակասեմիտիզմի վերադարձը Եվրոպա

Գրեթե բոլոր հետազոտությունները վկայում են, որ Եվրոպայում այսօր հակասեմիտիզմը կտրուկ զարգանում է: Եվրոպական հրեական կոնգրեսի նախագահ Վյաչեսլավ Մոշե Կանթորը սպառնալից անվանեց հակասեմիտիզմի մակարդակը Եվրոպայում: 2008թ. փետրվարին Երուսաղեմում տեղի ունեցած Հակասեմիտիզմի դեմ պայքարի համաշխարհային ֆորումի ժամանակ նա նշեց, որ Եվրոպական երկրներում նկատվում են հակասեմիտիզմի կայուն աճ եւ դրա դեմ պայքարի ոչ բավարար մակարդակ: Թերեւս, Կանթորը չի սխալվում:

Այս տարի հունվարին հրեա աշակերտները հարձակման ենթարկվեցին Բեռլինում, իսկ գերմանական երիտասարդության բառապաշարում «հրեա» բառը սկսեց օգտագործվել իբրեւ վիրավորական արտահայտություն: Փետրվարին իտալական ոստիկանության պահանջով հանվեց ինտերնետային բլոգներից մեկում տեղադրված իտալական համալսարանների 150 հրեա դասախոսների «սեւ ցուցակը»: Նույն ամսին Հունգարիայում արդեն չորրորդ անգամ պղծվեց հրեական Կապոշվար գերեզմանոցը: Իսկ Ֆրանսիայում առեւանգվեց հրեա երիտասարդ, որին հետագայում գտան խոշտանգված եւ հակահրեական արտահայտություններով խարանված դեմքով: Մարտին հաղորդագրություն տարածվեց, որ Բրուքլինում՝ նյույորքյան մետրոյում մահմեդականները «Ալլահ աքբար» գոչումներով հարձակվել եւ ծեծի են ենթարկել մեկ ռաբբի: Նույն ամսին Ռուսաստանի երրորդ քաղաքում՝ Նովոսիբիրսկում հայտնվեցին պաստառներ, որոնք զգուշացնում էին բնակիչներին ուշադիր լինել իրենց երեխաների հանդեպ, քանի որ գալիք հրեական Ձատկի տոներին մոտ հրեաները կարող են քրիստոնյա մանուկներ առեւանգել:

Սակայն հետաքրքրականը ոչ թե արձանագրված դեպքերն են եւ հակասեմիտական գործողությունների քանակական աճը, այլ որակական փոփոխությունները: Կարելի է համաձայնել Նաթան Շարանսկու հետ, որը պնդում է, թե այսօր Եվրոպայում հակասեմիտիզմը քաղաքականապես կոռեկտ թեմա է դարձել:

Փոխվել է հանրային գիտակցությունը, որն այլեւս չի դիտարկում հրեաների նկատմամբ բացասական վերաբերմունքն իբրեւ հասարակության համար մեծ խնդիր: Հարցումները ցույց են տալիս մի տպավորիչ ցուցանիշ՝ Եվրամիության բնակչության մեծ մասը գտնում է, որ հենց Իսրայելն է ներկայացնում ամենամեծ սպառնալիքը աշխարհի խաղաղության համար: Փաստորեն, Իսրայելը Եվրոպացիների աչքում ավելի վատ կերպար է ստացել, քան, օրինակ՝ Հյուսիսային Կորեան կամ Իրանը:

Այսպիսով, հրեաների նկատմամբ բացասական վերաբերմունքը տարածված է Եվրոպայում ավելի լայն մշակութային համատեքստում՝ սկսած ընտանիքից, դպրոցից, համալսարաններից, եկեղեցիներից մինչև ՋԼՄ եւ քաղաքականություն: Այս բոլոր հասարակական ինստիտուտներում ինչ-որ չափով անհասկանալի, սակայն կայուն հակասեմիտիզմի տրամադրություններ են տարածվում:

Հակասեմիտիզմի արդի ձեւերը

Հակասեմիտիզմի դեմ պայքարի համակարգման իսրայելական ֆորումը, որը միավորում է այդ երկրի հետախուզության եւ արտաքին քաղաքական գերատեսչության ներկայացուցիչներին, հստակ տարանջատում է ժամանակակից Եվրոպայում հակասեմիտիզմի երեք ձեւ՝ դասական, մահմեդական եւ նոր հակասեմիտիզմ:

Դասական հակասեմիտիզմը պատմականորեն հաստատված այն հայացքների եւ գաղափարների ամբողջականությունն է, որոնք ստեղծել են հրեաների բացասական կերպարը, եւ շատ Եվրոպական դժբախտությունների պատճառ մինչև օրս էլ համարում են հրեաներին: Ընդ որում, խոսքը ոչ թե ինչ-որ մարգինալ խմբերի ներկայացուցիչների մասին է, այլ բավական ներկայացուցչական եւ ընդունելի շրջանակների, որոնք Եվրոպական երկրների էլիտայի մի մասն են կազմում: Ժամանակ առ ժամանակ այդ դրսևորումները քննարկման առարկա են դառնում, ինչպես, օրինակ, այն դեպքը, երբ գերմանական խորհրդարանի պատգամավորը հայտարարեց, որ խորհրդային բանակի վայրագությունների մեղավորը հրեաներն են, իսկ գերմանական բանակի հատուկ մշանակության զորքերի հրամանատարը համաձայնեց նրա հետ, ինչից հետո նրանց ստիպեցին հրաժարական տալ: Կամ երբ հունական երգահան Միքիս Թեոդորակիսը, Փարիզում հրեական դպրոցի հրդեհից հետո հայտարարեց, որ հրեաներն են ամեն չարիքի աղբյուրը:

Կան մի քանի ժամանակակից հասարակական կարծրատիպեր, որոնք ամենատարածվածն են Եվրոպայի հասարակ քաղաքացիների շրջանում. հրեաներն ավելի հավատարիմ են Իսրայելին, քան երկրներին, որտեղ ապրում են, հրեաները չափից ավելի մեծ ազդեցություն ունեն տնտեսության մեջ եւ միջազգային ֆոնդային շուկաներում, հրեաները չափազանց շատ են խոսում Հոլոքոստի մասին, հրեաները մեղավոր են Հիսուս Քրիստոսի մահվան մեջ եւն:

Եվրոպայում *մահմեդական հակասեմիտիզմն* ավելի երիտասարդ երեւույթ է: Այն առաջացել է 20-րդ դարի կեսերին, Իսրայել պետության

ստեղծումից հետո եւ տարածվել Արեւմուտքում միայն դարավերջին, երբ այնտեղ իսլամադավան բնակչության ներկայությունը մեծացավ: Մահմեդական աշխարհի կրթական ծրագրերը, քարոզչությունը, մզկիթներում տարածվող հակահրեական կոչերը ստեղծում են հասարակական ֆոն, որը տեղափոխվում է նաեւ Եվրոպա՝ այնտեղ ապրող համայնքների միջոցով:

Այսօր այն հաճախ դիտարկվում է իբրեւ հակասեմիտիզմի ամենավտանգավոր ձեւը, քանի որ ընդունում է ահաբեկչական հարձակումների, փողոցային ավազակության եւ հրեաների հետապնդումների տեսք: Օրինակ, հրեաները համարում են, որ հենց այս պատճառով է հակասեմիտիզմը տարածվել այնպիսի երկրներ, որոնք մինչ այդ նման այլատյացության մեջ չեն նկատվել, օրինակ՝ Դանիան, որն ավանդաբար հրեաների պաշտպանն է եղել եւ հսկայական ներդրում ունի Յուդեոստի ժամանակ նրանց փրկության գործում:

Եվ վերջապես, *նոր հակասեմիտիզմը*, որն իր արտահայտությամբ նախորդ երկու տարատեսակների խառնուրդ է. այն նախաձեռնվում է եվրոպական ազդեցիկ հասարակական խմբերի՝ գիտնականների, քաղաքական գործիչների եւ ՋԼՄ-ի կողմից: Հիմնական քննարկման թեման Պաղեստինի օկուպացումն է եւ հրեական բանակի վայրագությունները գրավյալ տարածքներում: Ըստ հրեական գիտնական Դեբորա Լիպշտադտի, այս ուղղության կողմնակիցները «տարածում են խտրական պատկերացումներ Իսրայելի դեմ եւ կենտրոնանում Իսրայելի կողմից մարդու իրավունքների խախտման վրա՝ լիովին անտեսելով այն հանգամանքը, որ արաբական պետություններն իրենց հերթին թույլ են տալիս մարդու իրավունքների կոպտագույն խախտումներ»:

Այսինքն, ի տարբերություն դասականի՝ այսօրվա հակասեմիտիզմը հիմնական շեշտը դնում է մարդու իրավունքների խախտումների վրա: Միաժամանակ, Երուսաղեմի Հուդայական համալսարանի տնօրեն Ռոբերտ Ուիստրիչի խոսքերով, դրանով ընդամենը քողարկվում է համաշխարհային սիոնիստական դավադրության գաղափարի նկատմամբ այն վախը, որը նկատի է առնում «հրեաներ–Ամերիկա–համաշխարհային տիրապետություն–գլոբալացում» քառակուսին: Ի հայտ է գալիս շատ հետաքրքիր մի երեւոյթ՝ իսրայելական պետության դիվականացում, նրա նույնացում նացիստական պետության հետ, եւ հնչում են նույնիսկ ցեղասպանության մեղադրանքներ հենց հրեաների հանդեպ: Եվ այս ամենը նույնպես տեղի է ունենում մարդու իրավունքների պաշտպանության անվան տակ:

**ԱՐԱՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ
ԴԱՄԱՍԿՈՍԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ**
Արաքս Փաշայան

2008թ. մարտի 29-30-ը Ղանասկոսում տեղի ունեցավ արաքական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Արաքական պետությունների լիգայի (ԱՊԼ) ամենամյա, այս անգամ՝ հոբելյանական XX գագաթաժողովը: Չնայած Սիրիայի իշխանություններն ամեն զնով իրականացրին հանդիպումը, սակայն գագաթաժողովն, արաքական աշխարհում առկա բազմաթիվ տարածայնությունների պայմաններում, ի սկզբանե դատապարտված էր ձախողման: Աշխարհաքաղաքական տարբեր կողմնորոշումներ եւ սոցիալ-քաղաքական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող արաքական երկրներին հազիվ թե կարելի է միաբան համարել: ԱՊԼ գագաթաժողովներին ոչ միշտ են մասնակցել արաքական բոլոր երկրների առաջին դեմքերը: Սակայն ղանասկոսյան հանդիպումն այս առումով աննախադեպ էր, քանի որ դրան չէին մասնակցում անդամ պետությունների շուրջ կեսի առաջին դեմքերը, իսկ Լիբանանն ընդհանրապես բոյկոտել էր հանդիպումը:

Հաշվի առնելով Լիբանանի պարագան՝ արաքական առանձին երկրների ներկայացվածությունը ցածր մակարդակով էր: Սաուդյան Արաբիայի Թագավորությունը եւ Հորդանանը ներկայացված էին ԱՊԼ-ում իրենց մշտական ներկայացուցիչների, Եգիպտոսը՝ պետական նախարարի, Բահրեյնը եւ Օմանը՝ փոխվարչապետերի, Իրաքը եւ Եմենը՝ փոխնախագահների, Մարոկկոն՝ թագաժառանգի մակարդակով:

Արաքական առաջատար պետությունները, այդ թվում՝ Սաուդյան Արաբիան եւ Եգիպտոսը (նաեւ Ծոցի երկրները, Հորդանանը), որոնք իրենց տարածաշրջանային քաղաքականության մեջ որոշակիորեն հաշվի են առնում ամերիկյան հետաքրքրությունները, անհանգստացած են Սիրիայի արտաքին քաղաքական կողմնորոշումներով: Սիրիան մեղադրվում է Լիբանանում ստեղծված ներքաղաքական ճգնաժամին նպաստելու, Իրաքում իրավիճակի կայունացմանը խոչընդոտելու, արաքական աշխարհում ոչ համարժեք ընկալվող Իրանի հետ ռազմաքաղաքական եւ այլ ոլորտներում ակտիվորեն համագործակցելու, պաղեստինյան եւ այլ ծայրահեղական խմբավորումներին աջակցելու մեջ:

Նախօրեին ստացվել էր Լիբանանի վարչապետ Ֆուադ Սինյորայի

նամակը, որտեղ Լիբանանի բացակայությունը հիմնականում կապվում էր այդ երկրում Սիրիայի քաղաքականության եւ գործողությունների հետ: Ըստ այդմ՝ հենց Սիրիան է, որ պահպանում եւ խորացնում է Լիբանանյան ճգնաժամը: Սինյորայի կարծիքով՝ Լիբանան–Սիրիա հարաբերությունները պետք է դառնան առաջնահերթ արաբական քաղաքականության մեջ, իսկ առկա խնդիրների կարգավորմամբ պետք է զբաղվի Արաբական պետությունների լիգան: Լիբանանի վարչապետը կոչ արեց առաջիկայում կազմակերպել արաբական արտգործնախարարների հանդիպում՝ քննարկելու երկու արաբական երկրների հարաբերություններում առաջացած ճգնաժամային վիճակը: (Նշենք, որ արդեն չորս ամիս է, ինչ նախագահի ընտրությունները Լիբանանում ձախողվում են: Հերթական ընտրությունը նշանակված է ապրիլի 24-ին):

Դամասկոսի գազաթափողվին նախորդեցին արաբական շրջանակներում Սիրիային քննադատող դիսկուրսները: Հնչած տեսակետների համաձայն՝ Սիրիան արաբական միասնությունն իր համար առաջնահերթ չի համարում, իսկ չափազանց սերտ հարաբերություններն Իրանի հետ ուղղակիորեն վտանգում են արաբական աշխարհի հետաքրքրությունները: Այս մասին առաջինն ակնարկեց Սաուդյան Արաբիայի Աբդալլահ թագավորը, մարտի 24-ին՝ իր երկրի Նախարարների խորհրդի նիստում: Ի դեպ, Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի մոտեցումները համարժեք են Լիբանանյան դիրքորոշմանը: Գազաթափողվի հենց նույն օրը Սաուդյան Արաբիայի արտգործնախարար էմիր Սաուդ Ալ-Ֆեյսալը հատուկ հրավիրված ասուլիսում նշեց, որ Լիբանանյան ճգնաժամը պետք է լուծվի «արաբական տան» մեջ, իսկ Իրանը պետք է դուրս մղվի ներլիբանանյան դաշտից:

Մարտի 25-ին Լոնդոնի սաուդական «Աշ-շարկ Ալ-աուսատ» թերթում հրատարակվեց երկու հոդված, որոնցից մեկը վերնագրված էր «Դամասկոսի գազաթափողվը. ինչո՞ւ ներկա գտնվել», մյուսը՝ «Հրաժեշտի գազաթափողվ»: Առաջինում նշվում է, որ արաբական համերաշխության գաղափարը համոզիչ չէ, քանի որ մի արաբական երկիր սպանում է մեկ այլ արաբական երկրի: Հոդվածի վերջում հեղինակը, որպես զավեշտ, մեջբերել էր Սիրիայի գլխավոր մուֆտիի այն հայտարարությունը, թե Դամասկոսի գազաթափողվին մասնակցելը յուրաքանչյուր արաբ ղեկավարի պարտքն է, իսկ եթե նրանցից որեւէ մեկն առանց հիվանդության պատճառի ներկա չգտնվի, ուրեմն մեղսավոր է: Մյուս հոդվածում նշվում է, որ Սիրիայի իշխանությունները ներկայում շարժվում են մի ուղղությամբ, որը հակադիր է այն գծին, որով ընթանում են մնացյալ արաբական երկրները:

ԱՊԼ հանդիպման շուրջ ծավալված զարգացումներն իրանական կողմը որակեց որպես հարված ԱՊԼ-ի հեղինակությանը, արաբական միասնության դեմ Արեւմուտքի կողմից նախապատրաստված քայլ, Իրանը եւ արաբական աշխարհը տարանջատելու ամերիկյան ծրագրի ձախողում: Չնայած Սիրիան հրավեր էր ուղարկել Իրանի նախագահ Ահմադինեժադին, սակայն ստեղծված լարված պայմաններում գագաթաժողովին մասնակցեց արտգործնախարար Մ.Մոթաքին:

Նշենք, որ Սիրիայի եւ Իրանի միջեւ օրեցօր խորացող համագործակցությունը ռազմաքաղաքական եւ այլ ոլորտներում, նրանց աջակցությունը «Համասին», «Իսլամական քիհադին», «Հիզբալլահին», «Ալ-Ֆաթհ Ալ-իսլամին», առավել հակազդեցությամբ է ընդունվում Իսրայելում:

Դամասկոսյան հանդիպման գլխավոր թեման պետք է լիներ Լիբանանում ստեղծված վիճակը, սակայն այս երկրի բացակայությունը կանխեց թեմայի լայնածավալ քննարկումը: Հանդիպմանն ընդունվեց եզրափակիչ կոմյունիկե, ինչպես նաեւ՝ արաբական համերաշխության եւ տարաբնույթ ոլորտներում համագործակցելու մասին դրույթներ պարունակող դամասկոսյան հռչակագիրը:

Կոմյունիկեում տարածաշրջանի ռազմավարական առաջնահերթություն է համարվում արդարացի եւ համապարփակ խաղաղությունը, այսինքն՝ խաղաղության արաբական նախաձեռնությունը, որի մասին առաջին անգամ համապատասխան փաստաթուղթ ընդունվեց 2002թ. ԱՊԼ Բեյրութի գագաթաժողովում: Ըստ այդմ՝ արաբական երկրների հետ բնականոն հարաբերությունների դիմաց, Իսրայելը պետք է հեռանա արաբական բոլոր գրավյալ տարածքներից՝ վերականգնելով մինչեւ 1967թ. սահմանները: Փաստաթղթում մերժվում է տարբեր երկրներում պաղեստինցի փախստականների վերջնական հիմնավորվելու գաղափարը, փոխարենն ընդունելի է համարվում ՄԱԿ ԱԽ թիվ 194 բանաձեւը, համաձայն որի՝ պաղեստինցի փախստականները պետք է վերադառնան իրենց նախկին բնակավայրերը, այսինքն՝ ներկայիս Իսրայելի տարածքներ:

Փաստաթղթում արտացոլված է նաեւ ԱՊԼ միասնական տեսակետն Իրաքի վերաբերյալ: Դրանում արաբական աշխարհի առաջնորդներն իրենց համերաշխությունն են հայտնում Իրաքի միասնությանը, ինքնիշխանությանն ու անկախությանը, անընդունելի համարում օտար ուժերի միջամտությունն այդ երկրում: Իրաքի հարեւան պետությունները պետք է տարաբնույթ օգնություն տրամադրեն նրան, նպաստեն երկրում անվտանգության եւ կայունության հաստատմանը: Իրաքը, սակայն, հրաժարվեց ստորագրել փաստաթուղթը, քանի որ դրանում որեւէ կետ չկար երկրում ահաբեկչության դեմ պայքարի մասին:

Փաստաթղթում Լիբանանի մասով նշված է, որ գազաթափողվի մասնակիցները պաշտպանում են արաբական նախաձեռնությունը եւ ԱՊԼ գլխավոր քարտուղարի ջանքերը՝ Լիբանանյան կողմերի միջեւ հասնելու կոնսենսուսի՝ պաշտպանելու համար Լիբանանի միասնականությունը եւ կայունությունը: Առաջարկվեց ստեղծել ազգային համաձայնության կառավարություն, եւ նախագահի պաշտոնում ընտրել Լիբանանի բանակի գլխավոր հրամանատար Միշել Սուլեյմանին:

Եզրափակիչ կոմյունիկեի մեջ արտացոլված է նաեւ Դարֆուրի խնդիրը. Սուդանի կառավարությանը կոչ է արվում լուծել այն: Համերաշխություն է հայտնվում Սոմալիին եւ Կոմորյան կղզիների Հանրապետությանը, կոչ է արվում աջակցել այդ երկու երկրների միասնականությանն ու կայունությանը: Փաստաթղթում խոսվում է նաեւ ահաբեկչության եւ իսլամաֆոբիայի մասին: Դատապարտվում են ահաբեկչության բոլոր տեսակները, կոչ է արվում Միջին Արեւելքն ազատել զանգվածային ոչնչացման զենքի բոլոր տեսակներից:

Հատկանշական է, որ կոմյունիկեում ամրագրված էր նաեւ 1971թ. Իրանի կողմից երեք կղզիների՝ Փոքր եւ Մեծ Թոմբերի, Աբու Մուսայի օկուպացման հարցը, որի նկատմամբ մինչ օրս իր իրավունքներն է փորձում վերահաստատել Արաբական Միացյալ Էմիրությունները: Հանդիպմանը ԱՊԼ գլխավոր քարտուղարը Իրանին նախազուշացրեց, որ եթե կղզիները չվերադարձվեն, ապա իրենք ստիպված կլինեն դիմել Հաագայի միջազգային դատարան: Այս հարցում արաբական երկրների հետ համերաշխ էր նաեւ Սիրիան:

Հանդիպմանը հնչեցին տարբեր ելույթներ: Առավել սուր շեշտադրումներ էր պարունակում Լիբիայի նախագահ Մուամար Կադաֆիի ելույթը: Վկայակոչելով Եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի նախադեպը՝ նա նշեց, որ արաբներն աշխարհի վրա տեղ չունեն այնքան ժամանակ, քանի դեռ չունեն միասնական պետություն: Արաբական աշխարհում ընթացող գործընթացները Կադաֆիի համար անընդունելի են, քանի որ արաբների աչքի առաջ ամերիկացիները մահապատժի ենթարկեցին Սադամ Հուսեյնին: Կադաֆիի համոզմամբ՝ արաբ առաջնորդներին նույն ճակատագիրն է սպասում, եթե նրանք չարունակեն աջակցել ԱՄՆ-ին:

Միջարաբական հարաբերություններում առաջ եկած երկփեղկվածությանն անդրադարձավ նաեւ ԱՊԼ գլխավոր քարտուղարը, իսկ Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբասը նշեց, որ տարածաշրջանը կարող է դառնալ քաոսիկ: Այդ առումով նա մեծ դերակատարություն վերապահեց ԱՊԼ-ին, որը պետք է հետամուտ լինի տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Արաբական աշխարհն այսօր բախվել է ոչ միայն միջարաբական, այլ՝ ներարաբական խնդիրների, որոնք որոշակիորեն առնչվում են ամերիկամետ եւ հակաամերիկյան կողմնորոշումների հետ: Հասարակական երկփեղկվածությունն աստիճանաբար արմատանում է Պաղեստինում, Լիբանանում, Իրաքում:

Չնայած արաբ առաջնորդներն արաբական միասնության եւ համերաշխության հարցում դեռ հույսեր ունեն, սակայն առաջիկայում արաբական աշխարհին հազիվ թե հաջողվի միասնական դիրքորոշում ձեւավորել: Այլեւս չկա այնպիսի խնդիր կամ գաղափար, որ միավորի ողջ արաբական աշխարհը: Նույնիսկ Պաղեստինի եւ Երուսաղեմի խնդիրները զգալիորեն կորցրել են իրենց նախկին նշանակությունը:

Այս տեսանկյունից, դամասկոսյան հանդիպումը հարված էր արաբական միասնության գաղափարին: Այն խարխլեց նաեւ Դամասկոսի միջազգային հեղինակությունը: Վերստին ակնհայտ դարձավ, որ արաբական աշխարհի հիմնական խաղացողների (մասնավորապես Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի) համար անընդունելի է այն, որ Իրանը, օգտագործելով համագործակցությունը Սիրիայի հետ, մուտք է գործել միջարաբական քաղաքականության ավանդական ոլորտներ՝ Պաղեստին, Իրաք, Լիբանան:

ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ա. ԳՈՒՐԵԼ

Այս տարվա մարտի 14-ին Թուրքիայի Գերագույն վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Աբդուռահման Յալչինքայան երկրում կառավարող Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) փակման վերաբերյալ գործ հարուցեց՝ «փաստերի հիման վրա, որոնք վկայում են, որ այդ քաղաքական կազմակերպությունը դարձել է պետության աշխարհիկ հիմքերի դեմ գործողությունների կենտրոն»։ Իշխող կուսակցությանն ու նրա ղեկավարներին մեղադրում են մի շարք գործողությունների եւ արտահայտությունների համար՝ ուղղված կրոնը քաղաքական նպատակներով օգտագործելուն, Թուրքիայի կյանքի տարբեր ոլորտները իսլամականացնելուն, ներառյալ՝ բուհերում մուսուլմանական գլխաշորի կրման թույլատրումը։

Գերագույն վճռաբեկ դատարանի 162 էջանոց մեղադրական եզրակացությունն ուղարկվեց Թուրքիայի Սահմանադրական դատարան՝ քննարկման։ Նրա մեջ, ԱԶԿ փակման հետ մեկտեղ, կա նաեւ նախագահ Աբդուլլահ Գյուլի, վարչապետ Ռեջեփ Էրդողանի, խորհրդարանի նախկին նախագահ Բյուլենթ Առինչի, ԱԶԿ մի շարք առաջատար գործիչների եւ կառավարության անդամների քաղաքական գործունեության վրա 5 տարի ժամկետով արգելք դնելու պահանջ։

Սահմանադրական դատարանը, դիտարկելով մեղադրական եզրակացությունը, այն իր ձեռով ու բովանդակությամբ համապատասխան համարեց բոլոր անհրաժեշտ իրավաբանական պահանջներին եւ ընդունեց քննության։ Մեղադրանքը նաեւ ուղարկվելու է ԱԶԿ՝ մեկ ամսվա ընթացքում պաշտպանությունը պատրաստելու համար։ Փաստաբաններն ու ԱԶԿ ղեկավարությունն առաջադրված մեղադրանքները հերքող անհրաժեշտ փաստաթղթերի հավաքման համար կարող են լրացուցիչ ժամանակ խնդրել, որի հատկացման մասին որոշումը պետք է ընդունի Սահմանադրական դատարանը։

Սահմանադրական դատարանի կողմից ԱԶԿ գրավոր պաշտպանությունն ստանալուց հետո, Աբդուռահման Յալչինքայան Սահմանադրական դատարան եւ ԱԶԿ կներկայացնի իր դիրքորոշումը մեղադրանքի

հիմնական փաստերի վերաբերյալ: Այնուհետև Գերագույն վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազն ու ԱԶԿ ներկայացուցիչները կհանդիպեն դատարանում, որտեղ կարող են արտահայտել իրենց դիրքորոշումները եւ ներկայացնել դրանց հիմնավորման անհրաժեշտ փաստարկներ: Այդ ընթացքում Սահմանադրական դատարանի նախագահ Յաշին Քըլըչը պետք է պատրաստի ԱԶԿ փակման մասին գործի վերաբերյալ հիմնական հաշվետվություն, որը կփոխանցվի Սահմանադրական դատարանի 11 անդամներին: Նրանք էլ պետք է ընդունեն վերջնական որոշումը: Յանաձայն օրենքի՝ ԱԶԿ փակման համար անհրաժեշտ է առնվազն դատարանի 7 անդամների քվե:

ԱԶԿ փաստաբանները եռանդուն աշխատանք են տանում դատարանում պաշտպանության համար անհրաժեշտ նյութերի պատրաստման ուղղությամբ: Տեղի են ունեցել կառավարող կուսակցության ղեկավար մարմինների մի շարք խորհրդակցություններ, ուր մշակվել է կառավարության եւ կուսակցության համար այդ բարդ ժամանակահատվածում գործողությունների մարտավարություն: Մամուլում երեւան եկան հրապարակումներ՝ ի պաշտպանություն ԱԶԿ-ի եւ կուսակցական գործիչների ելույթներ՝ կուսակցության հանդեպ, հեղինակների կարծիքով, անօրինական գործողությունների քննադատությամբ: Սակայն երկրի բարձրագույն դատական մարմինների ղեկավարությունը հանդես եկավ դատավորների աշխատանքի նկատմամբ հարգանքով վերաբերվելու անհրաժեշտության մասին նախազգուշացմամբ, որոնք գործում են օրենքին խիստ համապատասխան՝ ղեկավարվելով իրավաբանական նորմերով, այլ ոչ թե քաղաքական նկատառումներով:

Փորձագետները դիտարկում են ստեղծված իրավիճակում ԱԶԿ հնարավոր գործողությունների մի քանի տարբերակներ: Դրանցից մեկը երկրի սահմանադրությունում ուղղումների փաթեթի շտապ ներմուծմանն ուղղված միջոցառումներն են, որոնք կարող են էապես փոխել ու բարդացնել երկրում քաղաքական կուսակցությունների փակման գործընթացը: Սակայն ընդդիմությունն անմիջապես հայտարարեց, որ եթե նույնիսկ նման ուղղումներն ընդունվեն, դրանք չեն կարող հետադարձ ուժ ունենալ, եւ ԱԶԿ գործը կքննվի նախկին օրենքներին համապատասխան:

Ըստ որոշ տեղեկությունների, ընթանում են նաեւ կուսակցության ստեղծման նախապատրաստական աշխատանքներ, որը կունենա այլ անվանում եւ ձեւականորեն կլինի նոր քաղաքական կազմակերպություն, բայց փաստացիորեն կհանդիսանա ԱԶԿ իրավահաջորդը: Սակայն

այդպիսի նոր կուսակցության գործունակությունը, որը զրկված է ճանաչված առաջնորդներից, մեծ կասկած է հարուցում: Առավել եւս, որ Թուրքիայի նորագույն քաղաքական պատմությունում արդեն կա համանման էջ, երբ 1998թ. հունվարին փակվեց վարչապետ Էրբաքանի գլխավորած Բարօրություն կուսակցությունը (ԲԿ): Ի դեպ, 10 տարուց քիչ ավելի անց, ԱԶԿ-ի հանդեպ սկսած դատական քննության օրերին դատարանը որոշում ընդունեց նաեւ Էրբաքանի նկատմամբ՝ նրան մեղավոր ճանաչելով ԲԿ (որը եղել է ԱԶԿ նախորդը) ֆինանսավորման հետ կապված խարդախության մեջ: Որպես պատժաչափ՝ դատարանն ընտրեց 11-ամսյա տնային կալանք: Էրբաքանին դատապարտել էին դրանից 6 տարի առաջ, սակայն դատավճռի իրականացումը նրա առողջության վատթարացման պատճառով հետաձգվել էր:

Մարտին արդարացան նաեւ իշխող կուսակցության փակման գործընթացի կապակցությամբ փորձագետների կանխատեսումները տնտեսության համար հնարավոր բացասական հետեւանքների վերաբերյալ: Նկատվում է երկրից արտասահմանյան կապիտալի արտահոսք, հիմնական սննդամթերքների գնաճ, 10 տոկոսով աճել է ինֆլյացիան, ստամբուլյան բորսան տենդի մեջ է:

Այս ամենը վկայում է, որ Թուրքիայում շարունակվում է ներքաղաքական սուր ճգնաժամը: Դրա յուրօրինակ խթան հանդիսացավ ԱԶԿ նախաձեռնությամբ երկրի սահմանադրությունում փոփոխություններ մտցնելու մասին խորհրդարանի որոշման շուրջ կոշտ բանավեճը, որով հանվում է բուհերում կանացի մուսուլմանական գլխաշորի՝ թյուրբանի կրման արգելքը: Այսինքն՝ երկրի ներքաղաքական դաշտում դիմակայության նոր ալիքի հիմնական պատճառը, ըստ թուրք փորձագետների, նույնն է՝ կառավարող ԱԶԿ գործողությունները, որոնք, ընդդիմության կարծիքով, տանում են Թուրքիայի իսլամականացման, նրա աշխարհիկ հիմքերի խորտակման:

* * *

Թուրքիայում թափ է հավաքում այս երկրի տարածքում ամերիկյան հակաօդային պաշտպանության (ՅՕՊ) համակարգի տարրերի հնարավոր տեղակայման շուրջ բանավեճը: Զյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղար Յասայ դե Զոոպ Սխեֆերը հանդիպել է թուրք լրագրողների հետ եւ պատասխանելով ՅՕՊ համակարգի ընդլայնման եւ Թուրքիայի տարածքում նրա երրորդ դիրքային շրջանի ստեղծման հնարավորության

մասին հարցերին՝ հայտարարել է. «Մեզ համար կարելու է, որպեսզի անվտանգության համակարգում թույլ տեղեր չլինեն: Այս կապակցությամբ, մենք աշխատում ենք ոչ թե առանձին երկրների, այլ ՆԱՏՕ բոլոր անդամների, այդ թվում՝ Թուրքիայի հետ: Մենք շարունակում ենք բանակցությունները»: «Առայժմ օրակարգում Թուրքիայում ՆԱՏՕ հրթիռների տեղակայման հարց չի դրված: Հրթիռները կրում են պաշտպանական ֆունկցիա, եւ հետեւաբար իրավիճակը չպետք է անհանգստություն առաջացնի», – ավելացրել է ՆԱՏՕ գլխավոր քարտուղարը:

Սակայն Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարի նման կարծիքը կիսում են ամենեւին ոչ բոլորը: Ու թեւ այս հարցի վերաբերյալ Անկարայի պաշտոնական դիրքորոշումը դեռեւս չի հնչել, թուրք փորձագետներն արդեն հաշվարկում են իրադարձությունների զարգացման հնարավոր տարբերակները: Անշուշտ, Վաշինգտոնը, հաշվի առնելով Թուրքիայի նպաստավոր աշխարհագրական դիրքը, խիստ շահագրգռված է թուրքական տարածքում իր ՀՕՊ տարրերի տեղաբաշխմամբ: Դա հաստատեցին թուրք ղեկավարների հետ Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսի բանակցությունները, որոնք կայացան ս.թ. փետրվարին Անկարայում: Ընդ որում, տեղական քաղաքական շրջանակներում նշում են, թե Վաշինգտոնի փորձերը՝ ներկայացնել ամերիկյան ՀՕՊ-ում Թուրքիայի մասնակցությունը սոսկ որպես նրա տարածքում՝ Դիարբեքիր քաղաքի շրջանում շարժական ռադիոտեղորոշիչ կայանի անվնաս տեղակայում, բոլորովին էլ շիտակ չի դիտվում: Փորձագետները գտնում են, որ ԱՄՆ ախորժակը միայն ռադիոտեղորոշիչով չի սահմանափակվում, եւ խոսքը Թուրքիայում հակահրթիռների տեղաբաշխման մասին է:

Իսկ դա նշանակում է, որ Չեխիայից ու Լեհաստանից հետո Թուրքիան կարող է լինել գլոբալ ամերիկյան ՀՕՊ համակարգի երրորդ բաղադրիչը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Համակարգը պոտենցիալ կերպով ուղղված է Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներին, բայց, փաստացիորեն, փոխդասավորվածության տեսակետից, նրա գործողության ոլորտի մեջ է մտնում նաեւ Ռուսաստանը: Թուրքիայում հատուկ ուշադրություն դարձրին Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մոհամադ Ալի Հոսեյնիի հայտարարությանը, որը վստահություն հայտնեց, թե Թուրքիայում ամերիկյան ՀՕՊ տարրերի տեղակայման ծրագրերը դատապարտված են ձախողման, քանզի հակասում են տարածաշրջանի պետությունների շահերին, այդ թվում՝ Ռուսաստանի: «Մենք վստահ ենք, որ

Թուրքիան թույլ չի տա սպառնալիքի տակ դնել տարածաշրջանի կայունությունը՝ հոգուտ ԱՄՆ էքսպանսիոնիզմի»,-ասաց իրանցի բարձրաստիճան դիվանագետը:

Փորձագետներն ամենեւին էլ չեն կիսում իրանական արտաքին քաղաքական գերատեսչության ներկայացուցչի վստահությունը: Նրանց կարծիքով, միանգամայն իրական է Անկարայի եւ Վաշինգտոնի միջեւ սակարկությունը: Համակարգի կառավարմանը մասնակցելու եւ ստացված տեղեկատվությանը տիրապետելու ամերիկյան ներկայացուցիչների հետ հավասար իրավունքի թույլատրման դեպքում՝ Թուրքիան կարող է իր տարածքում ՀՕՊ տարրերի տեղակայման համաձայնություն տալ: Այն բանից հետո, երբ ամերիկյան այս գաղափարը դառնա համամատակցական նախագիծ, որին քչերն են կասկածում, Վաշինգտոնին մերժելը գործնականում կլինի անհնար:

www.iimes.ru

Մերձավոր Արեւելքի ինստիտուտ

**ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ՅՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ
Վլադիմիր Սաժին**

Գաղտնիք չէ, որ Իրանի Իսլամական Յանրապետության (ԻԻՅ) միջուկային խնդիրը կարելի է լուծել երկու եղանակով.

– ընդունել միջուկային տերության (այսինքն՝ միջուկային զենքի տիրապետման) Իրանի կարգավիճակը՝ տարածաշրջանային եւ գլոբալ պլանում դրանից բխող բոլոր հետեւանքներով,

– ստիպել Իրանին դադարեցնել ուրանի հարստացման համար արդյունաբերական ենթակառուցվածքի ստեղծումը (այսինքն՝ պարտադրել ԻԻՅ-ին կատարել ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձեւի պահանջները):

Վերջինիս դեպքում դիտարկվում է երկու ճանապարհ, որոնցից յուրաքանչյուրն ունի եւս երկու ուղղություն.

ա) «բլիթ».

– իրանցիներին ֆինանսատնտեսական ու տեխնոլոգիական արտոնություններով սիրաշահում (այդ թվում՝ խաղաղ միջուկային ոլորտում)՝ լրիվ միջուկային ցիկլի ձեւավորումը դադարեցնելու փոխարեն,

– Իրանի վարչակարգին անվտանգության միջազգային երաշխիքի տրամադրում՝ արտաքին ազդեցիկայից եւ դրսից հրահրված ներքին կոլապսից,

բ) «մտրակ».

– համաշխարհային ընկերակցության կողմից ԻԻՅ-ի դեմ ֆինանսատնտեսական պատժամիջոցների խստացման պերմանենտ քաղաքականության անցկացում՝ ի պատասխան Անվտանգության խորհրդի որոշման կատարմանն ուղղված Իրանի գործողություններին,

– ուժային գործողությունների իրականացում: Դրանք եւս կարող են լինել բազմազան:

Կարելի է մեծ վստահությամբ ասել, որ Իրանի դեպքում «բլիթը» արդիական չէ: Իրանը Հյուսիսային Կորեա չէ: Այն համեմատաբար հարուստ է բարեկեցիկ երկիր է: Եվ հպարտ իրանցիները կմերժեն կաշառքը: Այստեղ նշանակալի դեր է խաղում իրանական հոգեմտածելակերպը: Ներկայումս պարսկական ազգային հոգեբանությունը, որը պարսկական կայսերական մեծապետական ազգայնականության եւ շիական ընտրյալության ձուլվածք է ներկայացնում, դարձել է քաղաքական գործոն: Թերեւս, հենց այստեղ է թաքնված Թեհրանի հավակնոտության ու «միջուկային համառության» գլխավոր պատճառը: Իրանցիներին դժվար է կաշառել: Առայժմ: Շեշտում եմ՝ առայժմ:

Մյուս կողմից, ուժային գործողությունները, ուն կողմից էլ որ դրանք անցկացվեն, կհանգեցնեն տարածաշրջանային, իսկ հնարավոր է՝ նաեւ գլոբալ աղետի, ընդ որում, տարբեր ոլորտներում եւ տարբեր կողմերով: ԻԻՀ-ին հասցվող հարվածի ենթադրյալ աղետալի հետեւանքների մասին կարելի է հետազոտությունների ողջ հատորներ գրել: Սակայն աստիճանական ֆինանսատնտեսական պատժամիջոցները կարող են դրական ազդեցություն ունենալ իրանական միջուկային խնդրի լուծման վրա: Եվ ահա ինչու:

Իրանական տնտեսությունը գտնվում է լճացման մեջ՝ ճգնաժամին մոտ: Դրա վառ օրինակ հանդիսացավ 2007թ. ամռան բենզինային ճգնաժամը: Բենզինի նորմավորում մտցնելու պատճառով Իրանի մայրաքաղաքում տեղի ունեցան անկարգություններ: Տնտեսագետները, այդ թվում եւ իրանական, չեն կասկածում, որ ճգնաժամը նախագահ Ահմադինեժադի կառավարության անարդյունավետ քաղաքականության արգասիքն է, այդ թվում՝ միջուկային ոլորտում: Հենց ԻԻՀ ղեկավարության «միջուկային քաղաքականությունն» է հանգեցնում Իրանի մեկուսացման:

Այն ամենաբացասական կերպով ազդեց տնտեսության վրա: 2007թ. ինֆլյացիայի աճը կազմեց 16 տոկոս (որոշ տնտեսագետներ խոսում են 18-20 տոկոսի մասին)՝ 2006թ. 12 տոկոսի դիմաց: Հիմնական սննդամթերքների գները աճեցին 1,5-ից 2-3 անգամ (1կգ բրինձն արժեր 150 թուման, այժմ՝ 250-ից ավելի, միսն արժեր 600, այժմ՝ 1000 թումանից ավելի): Երկու անգամ աճել է բնակարանի վարձակալության գինը: Տարբեր գնահատումներով՝ գործազրկության մակարդակը կազմում է 11 տոկոս՝ պաշտոնական տվյալներով եւ 30 տոկոս՝ Համաշխարհային բանկի տվյալներով:

Իրանական տնտեսության կարելուր հատվածը՝ Արաբական Միացյալ Էմիրությունների ու Թուրքիայի հետ առևտրի սեւ շուկան, պայթեց, քանզի իրանական բանկերը չեն կարողանում ապահովել նրա գործունեությունը:

Փլուզվում է ԻԻՀ բանկային համակարգը: Իրանի խոշորագույն «Սեպահ» բանկը ՄԱԿ թիվ 1747 բանաձեւի պատճառով հայտնվել է անկման եզրին, որովհետեւ պաշտպանել է հրթիռային ծրագիրը: 2007թ. երեք այլ իրանական պետական բանկեր՝ «Սադերատը», «Մելին» եւ «Մելաթը», հեռացվեցին ԱՄՆ ֆինանսական համակարգից: Իրանական բանկերի սնանկացումը կարող է տարածվել նաեւ տասնյակ մասնավոր ու պետական ընկերությունների վրա:

Առաջին հայացքից՝ ԱՄՆ-ը ընդունակ չէ տնտեսապես ուժգին խոցել Իրանին, քանզի նրանք վաղուց չունեն առևտրային հարաբերություններ: Սակայն իրանական առաջատար բանկերը, որոնց վրա թափվեցին պատժամիջոցները, մինչ այժմ դուրսով գործառնություններն իրականացնում էին ԱՄՆ բանկերի միջոցով, որոնք դրա համար օգտվում էին այսպես կոչված տարանցիկ բաժնետոմսերից՝ 180 աստիճան շրջապտույտով: Խոսքը գործառնությունների մասին է, որոնց սկիզբն ու վերջը ամերիկյան տարածքից դուրս են: Այժմ նման գործառնությունները կդադարեցվեն:

Կանխատեսելով նման շրջադարձ՝ իրանցիներն արդեն իսկ սկսել են անցնել այլ արժույթների, բայց միեւնույն է՝ դուրսից մեկուսացումը նրանց համար կլինի առնվազն անհարմար: Ավելին, Վաշինգտոնում հուսով են, որ արտասահմանյան ֆինանսական հիմնարկները բարիք կհամարեն չզնալ ամերիկացիների հետ հարաբերությունների սրացման եւ կխուսափեն իրանական բանկերի հետ կապերից, որոնց ԱՄՆ-ը հայտարարել է ահաբեկիչների աջակիցներ:

«Ոչ մի բանկ չի ցանկանա վտանգել իր համբավը եւ գործակցել նրանց հետ, որոնց հրապարակայնորեն հայտարարել են օրենքից դուրս», – ասել է ԱՄՆ ֆինանսների նախարարի փոխօգնական Մեթյու Լեւիտը: Որպես դրա հաստատում՝ արտասահմանյան բանկերը սկսեցին վարել հակաիրանական ֆինանսական քաղաքականություն: Գերմանական «Դոյչեբանկը», «Կոմերցբանկը», «Դրեզդները», երեք ճապոնական բանկ, ինչպես նաեւ այնպիսի խոշորագույն համաշխարհային բանկեր, ինչպիսիք են UBS-ը եւ HSBC-ն, սկսեցին փակել իրանցի հաճախորդներին (ինչպես ընկերություններին, այնպես էլ ֆիզիկական անձանց) պատկանող հաշիվները:

Տնտեսության համար, որը խիստ կախվածության մեջ է նավթային դոլարներից, այդ քայլերը չափազանց վտանգավոր են: Իրանին ավելի ու ավելի դժվար է ստանալ վարկ, արտարժույթ եւ պահել ավանդներն արտասահմանում: Իրանն աստիճանաբար զրկվում է իրեն անհրաժեշտ ներմուծումով ապահովելու հնարավորությունից: Իրանական ընկերություններն արդեն իսկ բախվել են ներմուծման գների 20-30 տոկոս բարձրացմանը, որովհետեւ իրանցիներին հարկ է լինում վարձել միջնորդներ, ֆինանսական սահմանափակումներից խուսափելու համար: Արտասահմանյան ներդրումները, որոնք հատկապես անհրաժեշտ են նավթարդյունահանման կարելորագույն օբյեկտներին, չնչին են: Մասնագետները կարծում են, որ բանկային-ֆինանսական պատժամիջոցները վանում են արտերկրյա ներդրողներին:

Եվ դա իրոք այդպես է: Պատժամիջոցները նախելառաջ հարվածում են իրանական գլխավոր՝ նավթային ոլորտին: 2005-2010թթ. հնգամյա պլանով նախատեսված էին արտասահմանյան ներդրումներ 28 մլրդ դոլարի չափով՝ նոր նավթավերամշակման ձեռնարկությունների կառուցման համար: Իրականում տարեկան ստացվում է ընդամենը 1 մլրդ դոլար:

Վերջերս «Pars Oil and Gas Company» ընկերության գործադիր տնօրեն Աքբար Տորքանը հայտարարեց, որ եթե տեղի չունենա էական արդիականացում, ապա նավթի արդյունահանումն Իրանում կնվազի տարեկան 5 տոկոսով: Համապատասխանաբար, չի հաղթահարվի եւ բենզինի դեֆիցիտը: Տնտեսագետների հաշվարկներով, նավթավերամշակման եւ նավթաքիմիայի վերականգնման համար պահանջվում է մինչեւ 30 մլրդ դոլար, եւ ամեն տարի, նրա «ծերացման» պատճառով, այդ ցուցանիշները կաճեն: Բացի այդ, անհրաժեշտ են առնվազն 100 մլրդ դոլարի ներդրումներ հետագա 10 տարիների ընթացքում օրական 1 մլրդ բարելավ արդյունահանումն ավելացնելու եւ այն օրական մինչեւ 5 մլրդ բարելի հասցնելու համար:

Շնորհիվ նավթի բարձր գների, պետք է սկսվեր բում, սակայն ֆինանսական պատժամիջոցները խանգարում են Իրանին օգտվել անսպասելի եկամուտներից: Դիտորդները գտնում են, որ ֆինանսական էմբարգոն եւ դրա հետ կապված ներդրումների կրճատումն առավել արդյունավետ են, քան մյուս միջոցները:

Թեեւ ԻԻՀ-ի դեմ կիրառվում են եւ այլ միջոցներ: Որոշ խոշոր ընկերություններ արդեն դադարեցրել կամ սահմանափակել են իրենց հարաբերություններն Իրանի հետ: Այդ ընկերությունների թվում են

այնպիսի խոշորագույն ֆիրմաներ, ինչպիսիք են «Սիմենսը», «Շելլը», «Բրիթիշ փեթրոլիումը»: Նրանց հաջորդում են ավելի մանրերը:

Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի կառավարությունները լուրջ ճնշում են գործադրում իրենց երկրների ընկերությունների վրա, որպեսզի նրանք խզեն կապերը Իրանի հետ կամ չհաստատեն նոր կապեր: ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելը վերջերս կոչ արեց՝ քննարկել եվրամիության երկրների ու Իրանի միջև առևտրային հարաբերությունների սահմանափակման հարցը՝ որպես Թեհրանի միջուկային ծրագրի նկատմամբ միջազգային պատժամիջոցների բաղադրիչներից մեկը:

Սա Իրանի համար չափազանց վտանգավոր ախտանիշ է: Միայն 2007թ. առաջին կիսամյակում Իրանի ու ԵՄ 27 անդամների միջև ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը հասել է 11 մլրդ 300 մլն եվրոյի, ընդ որում, եվրոպական երկրների արտահանումն Իրան կազմել է 4 մլրդ 600 մլն եվրո, իսկ Իրանից ներմուծումը՝ 6 մլրդ 700 մլն եվրո: Հասկանալի է, որ այդ երկրներն Իրանից ամենից առաջ տանում են նավթ, իսկ այնտեղ ներմուծում բարձրտեխնոլոգիական արտադրանք: Գնելով իրանական նավթը՝ ԵՄ-ն իր եվրոներով ամրապնդում է ԻԻՀ ֆինանսական վիճակը, իսկ վաճառելով սեփական ժամանակակից արտադրանքն ու բարձր տեխնոլոգիաները՝ օժանդակում է երկրի ողջ տնտեսության արդիականացմանը:

Այժմ պատկերացրեք, որ եթե նվազեն դրամատեխնոլոգիական հոսքերն Իրան, ինչ տնտեսական ապագա կսպասի երկրին, որն առանց այդ էլ գտնվում է տնտեսական ճգնաժամի ճիրաններում: Իսկ Իրանի հետ հարաբերությունների կրճատման գործընթացը շարունակվում է: Օրինակ, Գերմանիան, որը ԻԻՀ խոշորագույն գործընկերների ցուցակում զբաղեցնում է երկրորդ տեղը, առաջին կիսամյակում Թեհրանի հետ առևտրի ծավալն իջեցրել է 18 տոկոսով: Բրիտանա-իրանական առևտրի պալատի տվյալներով՝ Մեծ Բրիտանիայից Իրան արտահանման ծավալները նախորդ տարի նվազել են 7 տոկոսով՝ կազմելով 431,4 մլն ֆունտ ստեռլինգ:

Իրանական մայրաքաղաքում պաշտոնական դեմքերը կա՛ն պահպանում են օլիմպիական հանգստություն, կա՛ն պնդում են, թե այդ բոլոր պատժամիջոցներն իրենց հոգը չեն՝ խորամանկորեն նկատի ունենալով Չինաստանի օգնությունը, որը ներմուծվող նավթի առավել քան 12 տոկոսն ստանում է ԻԻՀ-ից եւ որը, նրանց կարծիքով, ընդունակ է փոխարինել ԵՄ-ին իրանական շուկայում: Սակայն ԱՄՆ պաշտ-

պանության նախարար Ռոբերտ Գեյթսի նույնբերյան այցը ՉԺՀ, որի ժամանակ Իրանի թեման հիմնականներից էր, թույլ է տալիս կասկածել իրանական քաղաքական գործիչների լավատեսության իրական լինելուն: Միեւնույն ժամանակ, Չինաստանն արդեն մի քանի տարի շտապ կերպով յուրացնում է նավթի ձեռքբերման նոր աղբյուրներ Կենտրոնական Ասիայում, Աֆրիկայում եւ Լատինական Ամերիկայում, որպեսզի հնարավորինս քիչ կախվածության մեջ լինի Իրանից եւ ողջ Մերձավոր Արեւելքից: Արդյունքում՝ չինական որոշ բանկեր կրճատել են կապերն Իրանի հետ:

Չինաստանը, ինչպես եւ բոլոր երկրները, անշուշտ, նայում է ԱՄՆ-ին: Վաշինգտոնը ԻԻՀ առեւտրատնտեսական գործընկերների դեմ գործի է զցել հակաիրանական մեքենան: Այդ պատճառով Թեհրանի գործընկերներն Արեւմուտքում եւ Արեւելքում մտածում ենք մեջ են: Նրանք բոլորն էլ հիանալի հասկանում են եւ գտնում, որ ավելի լավ է հեռանալ Իրանից ու կորցնել «դոլարը», բայց դրա փոխարեն մնալ ԱՄՆ շուկաներում եւ պահպանել «միլիարդները»:

Այսպիսով, կացությունն Իրանում ամենեւին էլ նախանձելի չէ: Հստակ է, որ ԻԻՀ ներկայիս ղեկավարությունը համաշխարհային ընկերակցության հետ չի գնա փոխզիջումների եւ հենց այնպես չի հրաժարվի ուրանի հարստացման ենթակառուցվածքի ստեղծման ծրագրից: Եվ այստեղ, թերեւս, միակ արդյունավետ գործիքը կարող է լինել միայն տնտեսական, առաջին հերթին՝ ֆինանսական պատժամիջոցների ծավալումն ու խստացումը:

Երբ Իրանի տնտեսությունը հասնի ինքնափլուզման կետին, հենց այդտեղ պետք կգա «բլիթը», ընդ որում, շատ քաղցր «բլիթը»՝ Թեհրանի համար իրական ու չափազանց ձեռնտու ֆինանսատնտեսական, բարձրտեխնոլոգիական, նաեւ քաղաքական (խլամական վարչակարգի պահպանման երաշխիքներ) արտոնությունների տեսքով: Ի դեպ, արդեն այժմ ԻԻՀ քաղաքական վերնախավի շատ ներկայացուցիչների շրջանում տեղի է ունենում համաշխարհային ընկերակցության հետ որոշակի փոխզիջման հնարավորության հարցի շուրջ իրանական դիրքորոշման վերազնահատում: Այն վերաբերում է անգամ, այսպես կոչված, պահպանողականներին: Բայց դա ոչ մի կերպ չի վերաբերում նախագահ Ահմադինեժադին ու նրա թիմին: Թեեւ միանգամայն պարզ է, որ միջազգային պատժամիջոցները ծանր կանդրադառնան Իրանի տնտեսության վրա: Եվ, դիտորդների կարծիքով, իրանական ղեկավարությունը գտնվում է նյարդային խանգարման եզրին:

Մյուս կողմից, Թեհրանից հնչող վիրավորանքներին ու սպառնալիքներին չափազանց մեղմ պատասխանները եւ համաշխարհային ընկերակցության կողմից Իրանի միջուկային հավակնությունների հանդեպ թողտվությունը կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ հետեւելով «Կատուն եւ խոհարարը» նշանավոր առակի կատվի պահվածքին՝ «Իսկ Վասկան լսում էր եւ ուտում», Թեհրանը բարեհաջող կավարտի իր միջուկային ծրագիրը եւ ընդհուպ կմոտենա միջուկային զենքի ստեղծմանը: Հենց այդ ժամանակ լիովին հավանական է, որ ԱՄՆ եւ՛կամ Իսրայելի նյարդերը կարող են չդիմանալ, ու առաջին պլան կմղվի իրանական միջուկային խնդրի լուծման ուժային տարբերակը: Իսկ դա կհանգեցնի անկանխատեսելի հետեւանքների՝ չբացառելով աղետալին:

www.iimes.ru

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏԱՔԻՆ ԷՔՍՊԱՆՍԻԱ	1
Գազիկ Տեր-Հարությունյան ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ	2
Ազատ Դեմիր ՄԵՆՔ ԷԼ ԵՆՔ ՀԱՅ...	7
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄՈՒՏՔԸ ԵՎՐՈՊԱ	11
Սարգիս Հարությունյան POST-KOSOVO. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐԸ	14
Սուրեն Մանուկյան ԱՅԼԱՏՅԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ. ՀԱԿԱՍԵՄԻՏԻՉՄ	18
Արաքս Փաշայան ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ	24
Ա. Գուրել ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ	29
Վլադիմիր Սաժին ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ	34

Շապիկին պատկերված է
տեսարան **Տայքից**

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: